

ՊՐՈՖ. Վ. ՔԱԼԱՆԹԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
СОПОСЛОВЕДИЯ
Академии Наук
СССР

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

ԳԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

3 6.2

14

Р-14

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Գյուգասնեստական տեխնիկումների համար



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1933



59782-66

Տեխ. խմբագիր՝ Գ. Չենյան

Սրբազրիչ՝ Ա. Յերիցյան

Հանձնված է արտադրության 4 ապոստոսի 1933 թ.

Ստորագրված է ապելու 10 սեպտեմբերի 1933 թ.

Պատկեր 1515

Գլավլիտ 8159 (բ)

Հր. 2624

Տպրած 2000

Գ Լ Ո Ւ Խ Ի

ԻՆՉՈՐԻ ՅԵ ՄԵՐ ՏԱՎԱՐԸ ՔԻՉ ԿԻԹ ՅԵՎ ՔԻՉ ԱՐԴՅՈՒՆՔ ՏԱԼԻՍ

Վոր մեր կովերը փոքր կիթ են տալիս և վոր մեր տավարը տնտեսության մեջ վնաս է բերում, այդ ամենքը քաջ գիտեն. և ամենքը զանգատվում են մեր տավարի վատ ցեղից:

Բայց հազիվ թե շատերն իրենք իրենց հարց տված լինեն, թե արդյոք ի՞նչ է պատճառն այդ ցած կիթի և վորո՞նք են մեր տավարի փված վնասի հիմունքները: Այս հիմնական հարցի պատճառներին հետամուտ չլինելով շատերը շատ պարզ և հասարակ կերպով են պատասխանում այդ հարցին՝ «մեր կովերի ցեղն է վատ, պետք է ավելի լավ ցեղի տավար ձեռք բերել, իսկ դրա համար հարկավոր է ծախսել մեծ գումար, վորը բացակայում է»:

Բայց արյո՞ք իրավացի չե այդ պատճառաբանությունը:

Միայն ցեղի՞ հարցն է այստեղ:

Մի՞թե մեր կովերի ցեղն այնքան վատ է, վոր նրանից անկարելի չե արդյունք ստանալ:

Իսկ ի՞նչ արդյունք են տալիս մեզանում այն հոտերը, վորոնք ոտար ցեղի կովերից են կաղմված, կամ վորոնք հայտնի ցեղի տավարի խառնուրդ են ներկայացնում:

Յեթե մեր տնտեսությունների ղեկավարներն իրենք իրենց այս հարցը տան և ուշադրությամբ քննեն իրենց տնտեսությունը, նրանք կտեսնեն վոր շատ հաճախ ոտար ցեղի հոտերն էլ են քիչ կաթ տալիս և ընդհակառակը՝ կան տեղային կովերից կաղմված հոտեր, վոր բավարար կիթ են տալիս: Նրանք կհամոզվեն, վոր մեզանում մեր հոտերի կիթը (լինի տեղային, թե ոտար ցեղի, թե խառնուրդ) շատ ցած է: Յեվ միայն բացառիկ հոտեր են, վոր իրենց կիթով ծածկում են իրանց ծախսը և արդյունք տալիս:

Այս վերջին տեսակի տնտեսությունների մեջ նրանք, ի մեծ զարմանք իրենց, կգտնեն այնպիսիները, ուր հոտը բաղկացած է միայն տեղային կովերից: Որինակ՝ Մոսկվայի և ուրիշ մեծ քաղաքների մերձքաղաքային տնտեսություններում կարելի չէ տեսնել տեղային կովերից բաղկացած հոտեր, վորոնք տալիս են 4-5000 կիլո տարեկան կիթ, իհարկե յեթե նրանք ապահովված են առատ կերով և ունեն լավ, տաք, լուսավոր և հարմար գոմեր:

Ուրեմն, տեղային, գեռ չափվացրած ցեղի կովերն ել կարող են լավ կիթ տալ և բավարար արդյունք ապահովել, և ընդհակառակը՝ ագնիվ, լավ կաթնատու ցեղի կովերից կազմված հոտերն ել, կարող են պատահել, վոր քիչ կիթ ունենան և արդյունք չտան:

Ի՞նչ է, ուրեմն, սրա պատճառը, ինչո՞ւմն է գաղտնիքը: Պարզ է, վոր մեր հոտերի կիթի և հետևապես նրանց տված արդյունքների պակասության պատճառը միայն ցեղը չի, այլ կան և ուրիշ հանգամանքներ, վորոնք պակասեցնում են կովերի կիթը և նրանց տված արդյունքը: Պարզ ասելով՝ այստեղ գլխավոր հարցը կենտրոնանում է կովերը կերակրելու, կերերի քանակի և վորակի ու հոգալու վրա:

Փորձը ցույց է տալիս, վոր յեթե տնտեսությունը հոգ է տարել կովերը պատշաճ կերակրելու մասին և նրանց կանոնավոր կերպով է պահել ու կիթել, հասարակ տեղային ցեղի տավարն ել կարող է բավարար կիթ և արդյունք տալ: Յեվ ընդհակառակը, յեթե կերը և հոգատարությունը պակասում են, ամենահայտնի և ագնիվ տեսակի արտասահմանյան կովերն ել անկարող կլինեն ապահովել լավ կիթ և արդյունք և իրենքն ել տարեց տարի կայլասերվեն:

Ուրեմն, պարզ է, վոր առանց բավականաչափ կերեր հայթայթելու կովերին՝ չի կարելի հուսալ նրանցից առատ կիթ ստանալ: Բայց այդ ել բավական չէ, առատ կերն ել կարող է չտալ ցանկացած արդյունքը, յեթե նրանց ընտրությունը և մատակարարելու ձևը չի համապատասխանում կովերի կենսական և կաթնատվության պահանջներին. կերակրելու ձևը պետք է իմանալ:

Յերբ վոր տավարը կերակրելու մասին խոսք է բացվում, շատերը մտածում են. «Ի՞նչ մեծ հուշար է տավար կերակրելը, դու ասա՛ կեր լինի, իսկ կովի առաջը թափելը ամեն մարդ կարող է»: Հետագայում գրքույկիս ընթերցողը

պարզ կտեսնի, վոր այդ տեսակի կարծիքները հիմնված են այն հանգամանքի վրա, վոր շատերը չգիտեն թե յե՛րբ և ի՛նչ տեսակի կերի պահանջ ունի կովը յուր կաթնատվության ընթացքում և թե ի՛նչ կերեր ի՛նչ արժեք են ներկայացնում կաթի արդյունաբերության գործում:

Դյուղատնտեսը, վորը կարողանում է այս հարցերին պատասխան գտնել յուր գիտության և փորձառության մեջ, վորը գիտե, թե յերբ կերը պետք է խնայել, յերբ ընդհակառակն՝ առատ կերակրել, կաթնատվության ընթացքում յե՛րբ ի՛նչ տեսակի կեր գործածել, ավելի առատ և եժան կիթ ստանալ, քան մյուսը վորն այդ հարցերում «գլուխ չի հանում»:

Ահա մի որինակ: Տվերի նահանգում յերկու է և Բ տնտեսության մեջ (առաջինի հոտը գտնվում էր այս գրքույկի հեղինակի հոգացողության տակ, յերկրորդը պատկանում էր նրա հեռավոր հարևանին) հավասար հոտեր եյին պահում, ամեն մեկը 30-40 գլուխ կովից և յերկուսն ել միևնույն, տեղային ցեղից բաղկացած: Յերկուսն ել տարեկան միևնույն չափի և վորակի կերեր եյին գործածում՝ ձմեռվա ընթացքում միջին թվով ամեն մի կովին 16 ցենտներ խոտ, 8 ցենտներ հարդ և 3-4 ցենտներ ուժեղ կեր (կտավհատի քուսպ, թեփ և խոփուկի ալյուր) եր հայթայթվում: Ամառվա արոտատեղերն ել հավասար վորակի եյին: Ի՞նչ եր սրանց տարեկան կիթը:

Քանի վոր յերկուսի մեջ ել միևնույն տեսակի և քանակի ձմեռվան կեր եր հայթայթվում և ամառվա արոտատեղերն ել հավասար վորակի եյին, պետք եր յենթադրել, վոր նրանց կիթն ել մոտավորապես հավասար կլինի: Իրողությունն ուրիշ եր՝ մինչդեռ առաջին հոտի ամեն մի կովի կիթը միջին թվով 2200 կիլո յեր, յերկրորդինը հազիվ 1000 կիլոյի յեր հասնում: Ինքն իրան հասկանալի չէ, վոր կաթն ել այս վերջին տնտեսության մեջ ավելի թանկ եր նստում, քան առաջինում:

Ինչպես մենք հետագայում կտեսնենք այս տարբերությունն առաջ եր գալիս բացառապես այն հանգամանքից, վոր կերակրելու կամ կերերի գործածության ձևերն այդ տնտեսությունների մեջ տարբեր եյին: Քանի վոր կերերի տարեկան սրաչարր միևնույն եր թե՛ առաջի, թե՛ յերկրորդ տնտես-

վեն, կմաշվեն և ուրեմն կենդանին այնքան ավելի կերի պահանջ կզգա, կբաղցի:

Ուրեմն, չարժեքի, աշխատանք կատարելու, արածելու և յուր մարմինը տաքացնելու համար կենդանին այրում է յուր արյան մի մասը, իսկ կորստի, այդ այրվածքի տեղը լրացնելու համար կերի պահանջ է գլուխ: Բայց բացի այդ՝ կենդանին կորցնում է յուր մազը, բուրդը, մաշվում են կճղակները և նրանց վերանորոգելու համար նորից մի փոքր կերի պահանջ է գլուխ: Ուրեմն, մշտական, անդադար կենդանին մաշում ու կորցնում է յուր մարմնի մասնիկները և նրանց վերանորոգելու, վերստեղծելու համար պահանջում է կերի մի հայտնի քանակ:

Այն կերը, վորը կենդանին պահանջում է, գործ է ածում միայն յուր մարմինը, յուր գոյությունը պահպանելու համար, առանց մի վորևե աշխատանք կատարելու, կամ թե կաթ արտադրելու, կամ թե առանց գիրանալու (ճարպ ու միս ավելացնելու), բայց և առանց լղարելու, մենք անվանում ենք կենսապահ կեր. որինակ, հասարակ, գյուղական, անկիթ կովի համար հարկավոր է որական 6 կգ. սո՛վորական խոտ, 4-5 կգ. հարդ, վորնա կարողանա ապրել առանց լղարելու և գիրանալու. և այս կերն է, վոր մենք կանվանենք կենսապահ կեր:

Ուրեմն, կենսապահ կերն ամբողջովին գործ է ածվում ուժ և տաքություն ստեղծելու և մարմնի մաշված մասերի վերստեղծման համար: Պարզ է, վոր ձմեռվա ցրտին ավելի կենսապահ կեր է պահանջվում, քան ամառվա տաք ժամանակը: Մյուս կողմից ամառը, յերբ տաքորը շատ է չարժեքում արածալու ժամանակ, կենսապահ կերի պահանջը նույնպես մեծ է:

Իսկ յեթե կովը, բացի այդ, պետք է կաթ ել տա, սրա համար նա պետք է լրացուցիչ կեր ստանա, վորովհետև կաթը միևնույն մարմնից է առաջանում, վորը իհարկե մաշվում է: Վորքան կովը ավելի կաթ տա, այնքան նա ավելի կմաշի յուր մարմնի նյութերը և նրա ախորժակը հագեցնելու համար ևս առավել կեր կպահանջվի: Ահա այդ հավելումը, վորը կազմում է կաթ արտադրելու բաժինը, մենք անվանում ենք արտադրական կեր. և վորքան կովը ավելի կաթ տա, այնքան ավելի մենք պետք է ավելացնենք կերի արտադրական մասը:

Կաթնատու կովի կերակրման բոլոր հմտությունը նրանում է կայանում, վոր գյուղատնտեսը կարողանա լավ վորոշել՝ յե՛րբ կովը պահել միայն կենսապահ կերով, յե՛րբ սկսել արտադրական կեր ավելացնել, վորքան ավելացնել և ի՛նչ տեսակի կերերից կազմել նրա որվա բաժինը:

Բացի այս 2 տեսակի սնունդից (կենսապահ և արտադրական), վորը պահանջում է կովը իր անձի համար, կա և մի առանձին կերի պահանջ, վորը կովը զգում է, յերբ նա հղի յե լինում—արգանդում աճող հորդի պահանջն է: Հորդը յուր մոր արգանդում սնունդ է ստանում մոր արյունից և այդ արյան պակասող մասը վերստեղծելու համար մայրը պահանջ է զգում կերի հավելումի:

ԳԼՈՒԽ III

Ի՞նչ է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԿՈՎԻ ԿԱԶՄՎԱԾՔՈՒՄ ՆՐԱ ԿԻԹԻ ԱՌԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ «ՉՈՐ» ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Յեթե ուշադրությամբ քննենք կաթնատու կովի կյանքը, մենք կտեսնենք յերկու մեկը մյուսից բոլորովին տարբեր շրջաններ:

Նախ քան ծնելը, չոր շրջանում, յերբ կովը կաթ չի տալիս, նա միայն յուր կյանքը պահպանելու համար անհրաժեշտ կերի պահանջ է զգում, այսինքն կենսապահ կերով նա կարող է բավարարվել: Բացի այդ նրան հարկավոր է մի փոքր հավելում՝ արգանդում աճող հորդի բաժինը: Պարզ է, վոր վորքան մոտ լինի ծննդի ժամանակը, այնքան հորդը ավելի ու ավելի սնունդ (արյուն) կպահանջի մորից. հետևապես և կովը պետք է ավելի ու ավելի կեր ստանա իրրե հորդի բաժին: Կարելի յե հաշվել, թե անմիջապես ծննդից առաջ հորդի բաժինը կկազմի 1 կիլո ուժեղ կեր (թեփ, քիչ քուսպ, վարսակի կամ գարու ալյուր):

Ուրեմն, այս շրջանում կովի կերը կարող է սահմանափակվել խոտ և հարդով և մի փոքր ուժեղ կերի հավելում իրրե հորդի բաժին: Յեթե խոտը չափ լավն է և առատ, կարելի յե դրանով սահմանափակվել, առանց ուժեղ կերի. բայց գերադասելի յե ստամոքսը այնքան ել չճանրաբեռնել կերերով, հարդով, այլ ուժեղ կեր ավելացնել:

Յեթե ծնելուց առաջ, չոր շրջանում, կովը առատ կերակրվի, նա զուր տեղը կգիրանա, վորովհետև այդ շրջանում

նա յուր կերը այլ ևս կաթի չի վերածում, այլ միայն բաժա-
կանանում է կենսապահ կերով: Բայց այդպես վարվել, իհար-
կե, պետք չի, յերկու պատճառով: Առաջինը՝ գիրացած կովը
գժվար կծնի, յերկրորդը՝ կարիք ել չկա, ձեռնառու չի:

Ծնելուց հետո կովի կազմվածքը կարծես թե բոլորովին
վերստեղծվում, փոփոխվում է՝ կովը անընդունակ է դառ-
նում գիրանալու, կուրծք մեծանում է, սկսում է առատ ար-
յուն ստանալ և կաթնատվությունը մեծ չափ է ստանում:
Այժմ կովը մայր է և նա ինչպես մայր պարտավոր է կերակրել
և մեծացնել և «վոտքի կանգնեցնել» յուր փոքրիկին: Իսկ
բնությունը ամեն մի կազմվածք այնպես է ստեղծել, վոր
նա կարողանա յուր զավակին սնունդ տալ վոչ միայն այն
ժամանակ, յերբ նա արգանդումն է ապրում, այլ և աշխարհ
զալուց հետո: Քանի վոր հորդը մոր արգանդումն է ապրում,
նա սնունդ է ստանում անմիջապես մոր արյունից, վորը
պորտի թելի միջոցով մոր յերակներից հոսում, անցնում է
զավակի յերակները: Այդ շրջանում հորդը չի ուտում և չի
խմում, վորովհետև մորից ստանում է պատրաստի արյուն:
Հղիության սկզբում, յերբ պտուղը դեռ չատ փոքր է, նրա
սննդի համար բավական է միայն մի քանի կաթիլ մայրական
արյուն: Վորքան նա ավելի յե մեծանում, այնքան ավելի ու
ավելի արյուն է պահանջում մորից: Վերջապես, յերբ զա-
վակը աշխարհ է գալիս, պորտի թելը կտրվում է, հորդը այլ
ևս արյուն չի ստանում մորից և նոր պահանջ է առաջ գալիս՝
բերանով սնունդ ստանալու:

Սակայն ի՞նչ փոփոխություն է կատարվում այդ ժամա-
նակ մոր կազմվածքում: Մենք տեսանք վոր քանի զավակը
աճում էր, այնքան համապատասխան մայրը ավելի ու ավելի
արյուն եր ուղարկում յուր մարմնի այն մասը, վորտեղ ապ-
րում ու զարգանում եր նրա զավակը—պտուղը: Այժմ, յերբ
պտուղը աշխարհ է յեկել, այլ ևս այն կողմը արյուն ուղար-
կելու կարիք չկա, բայց դրա տեղ այժմ մայրը նոր պարտա-
կանություն է ստանում՝ տալ յուր զավակին միևնույն ար-
յունը, բայց ձևակերպված և կաթի ձև տված:

Յեվ ահա՝ մենք տեսնում ենք, ինչպես մոր կազմվածք
բոլորովին վերաշինվում է, դեպի արգանդը տանող ճանա-
պարհը (յերակը) փակվում, բայց դրա տեղ՝ մինչև այժմ
դատարկ կուրծք սկսում է առատ արյուն ստանալ, ուռճա-
նում է և մեծ գործունեյություն զարգացնում, ստացած ար-

յունը կաթի վերածելով: Մինչև հորդի աշխարհ գալը կուրծք
անընդունակ եր արյունը կաթի վերածելու. նրա միջոցով
միայն այնքան արյուն եր հոսում, վորքան վոր հարկավոր
եր միայն իրան, կրծի գոյության համար: Այժմ նա նոր ըն-
դունակություն է ստանում՝ յուր մասնիկները կաթի վերա-
ծելու և արյան մեծ քանակություն իբրև կաթ պատրաստելու
նյութ է ծառայում, կարելի յե ասել այստեղ կաթի գոր-
ծարան է բացվում:

Բայց կրծի կաթ արտադրելու ընդունակությունը չի սահ-
մանափակվում այն չափով, վորը հարկավոր է հորդին նրա
ծննդյան րոպեին, մայրը պարտավոր է յուր զավակի սնուն-
դը ապահովել մինչ այն հասակը, յերբ մանուկը արդեն կսո-
վորի ուրիշ կերով ապրել: Քանի վոր հորդը աճում է որեւ
որ, բնությունը մոր կազմվածքին հաղորդել է 2—3 անգամ
ավելի ընդունակություն, քան հարկավոր է նորածնի հա-
մար:

Այս կաթնարտադրական ընդունակությունը այնքան
ուժեղ է, վոր կաթնատվության շրջանում կովը, իբրև մայր
սսես թե ինքն իրա անձը մոռանում է, արհամարհում է և
յուր բոլոր ուժերը գործ է ածում միայն մի բանի վրա—
բոլոր կերը կաթի, այսինքն յուր զավակի սննդի վերածելու:
Յեվ իսկապես, նոր ծնած կովը վորքան ել վոր առատ կերա-
կրեն չի գերանալ միայն կիթը կավելացնի: Ավելի ուշ
յերբ հորթը կամաց կամաց կսկսի ուրիշ կերերի սովորել,
կովն ել համապատասխան յուր կիթն է պակասեցնում և այդ
ժամանակ արդեն ավելորդ կերից կիթը այլ ևս չի ավելա-
նալ, այլ կովը կգիրանա:

Այժմ մենք արդեն գիտենք մի կարևոր հանգամանք,
վորից կոմսները պետք է ոգտվի կերերը ավելի լավ ոգտա-
գործելու համար: Այժմ պարզ է, վոր կաթնատու կովին կե-
րիք կարելի յե մեծ չափով մատակարարել և ձեռնառու հե-
տեվանգնելով: Մյուս կողմից պարզվում է, վոր ընդհակա-
ռակը՝ կիթի չորանալուն մոտենալու շրջանում ավելորդ կե-
րից կովը միայն գուր տեղը կգիրանա առանց կիթը ավելաց-
նելու:

Գ Լ Ո Ւ Խ 1V

ԿՈՎԵՐԻ ԿԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՉԱՆԱՉԱՆ ՇԲՋԱՆՆԵՐՈՒՄ

Փորձը ցույց է տալիս, վոր նոր ծնած կովը կարող է մեծ
քանակությամբ կեր գործածել և նրանից մեծ քանակությամբ

լաթ սպտորաստել, և այդ կիթր եթան կնստի: Իսկ կաթնատուփյան չրջանի վերջում ինչքան ուղես կեր տուր, ապարդյուն, մեծ կիթ չի ստացվի և կաթն էլ թանկ կնստի:

Յեթե, որինակ, կովին միայն նրա կյանքը պահպանելու համար հարկավոր է 8 կիլո խոտ 40 կոպեկի և մի 20 կոպեկ էլ նրան խնամելու, արածելու և այլ մանր ծախսերի համար, ուրեմն նրա ամբողջ որվա ծախսը կկազմի 60 կոպ.: Յեթե այս հիմնական ծախսին ավելացվի որական 2 կիլո քուսպ 30 կոպեկի և 4 կիլո թեփ 40 կոպեկի, այս լրացուցիչ ուժեղ կերից նա կարող է արտադրել մոտ 14 կիլո կաթ: Հաշվենք թե ինչ կստացվի՝ կենսապահ կերը արժի 40 կոպ. և արդյունաբերը 70 կոպ., ընդամենը 1 ռ. 10 կոպ.: Ուրեմն ամեն մի կիլո կաթը կնստի մոտ 8 կոպ.:

Յեթե միևնույն կովը կաթնատուփյան չրջանի վերջում, յերբ նա հազիվ 2 կիլո կաթ է տալիս, մենք նույնպես առատ կերակրենք, ինչպես սկզբում, դա կլինի աննպատակ՝ նա միևնույն չափով, այսինքն յուր ուժից վեր կիթ տալ չի կարող: Նրա կերակրելը և խնամելը կ'նստի միևնույն գինը, այսինքն միայն կերի գինը որական 1 ռ. 10 կոպ. վորը բաժանելով կիթի վրա (2 կ.) ամեն մի կիլոի վրա 60 կոպ. կգա, ուրեմն $7\frac{1}{2}$ անգամ ավելի թանգ քան սկզբում: Սրա հետևանքը կ'լինի՝ թանգ կերակրելը և կովի ապարդյուն գիրանալը: Ասածիցս հետևվում է, վոր գյուղատնտեսը կերի ամենամեծ և ամենալավ և սննդարար պաշարը պետք է կովին մթերի կաթնատուփյան սկզբում, առաջին չրջանում, իսկ նրա վերջում ընդհակառակը՝ պետք է տնտեսել, խնայել կերը:

Արդյոք այդպե՞ս են մեզանում վարվում:

Մենք տեսնում ենք, վոր մեր գյուղատնտեսները դրա հակառակ ճանապարհով են գնում՝ աշունքվանից, յերբ կովի կիթը սովորաբար սպառվում է, իսկ ինքը ամառվա արոտատեղերից վերադառնում է կուշտ և գիրացած, նրան կերակրում են աշունքվա առատ պաշարից: Իսկ զարուհին, տավարի հորթաբերության, ծննդի ժամանակ, յերբ կերերի պաշարը սպառվել է, կերակրում են ավելի խնայողաբար, իսկ յերբեմն այնքան սուղ, վոր կովը հազիվ կարողանում է յուր կյանքը պահպանել:

Կերակրելու այդ յեղանակը չի կարող և սպասելիք հետեվանքներ տալ, վորովհետև այն չրջանում, յերբ կովը ընդունակ է մեծ կիթ և արդյունք տալ, կերի պակասություն է

զգացվում, այն կերի, վորը առաջուց, անժամանակ արդեն ծախսված, վատնված է յեղել: Իսկ վերը մենք տեսանք, վոր կովի նոր ծնած ժամանակը ձեռնտու չէ, հարկավոր է լավ, առատ կերակրել, նույնիսկ գնովի կերեր գործածել, վորովհետև նրանք իրանց գինը կհանեն մեծ արդյունքով: Այդպես չեյին վարվում մինչև այժմ մեր գյուղացիները, վորոնց տնտեսությունը այժմ ընդհանրացրած լինելով, պետք է անցնի բոլորովին ուրիշ ձևի, ուրիշ սխեմայի: Դժբաղդաբար, դեռ մեր կոլխոզների մեծամասնությունը կարելիություն չի ունեցել անցնել տավարը խնամելու և կերակրելու նոր ձևերին:

Ինչպես վերը ասածներից պարզ է, բանի ելույթյունը միայն կերի քանակում չէ կայանում, այլ լավ կերակրելու համար հարկավոր է հասկանալ, թե ինչ կերերից և ինչ չափով առած պետք է կազմել որվա բաժինը, վոր ստացվի ամենանպատակահարմար կերի խառնուրդ: Այս հարցերը լավ հասկանալու համար հարկավոր է իմանալ կերերի բաղադրությունը՝ թե ինչ սննդարար մասերից են նրանք կազմված, պետք է նույնպես իմանալ կենդանու սննդի պահանջը նրա կաթնատուփյան զանազան չրջաններում: Գիտնականները հետազոտել են զանազան կերեր և գիտեն նրանց բաղադրությունը: Մյուս կողմից նրանք լավ գիտեն, թե ինչպես է կովը յուր սնունդը ստանում և ինչ սննդարար նյութերի պահանջ է զգում նա կաթնատուփյան զանազան չրջաններում:

Հնաագույնությունները պարզել են, վոր ամեն տեսակի նյութերի մեջ, վորոնք թե մարդու և թե կենդանիների համար են ծառայում, առաջին տեղն է բռնում «սպիտակուցը», մի նյութ, վորը նման է ձվի սպիտակուցին կամ պանրանյութին, չոռին: Բացի այդ, կերերը պարունակում են յուղանյութեր (որինակ, ճարպ, կտավհատի, կանեփի, արևածաղկի կամ ուրիշ սերմերի յուղանյութ կամ ձեթ): Հետո կերերի մեջ մենք գտնում ենք ոսլա (կրախմալ), որինակ՝ զանազան սերմերում, կարտոֆիլի մեջ, կամ թե չաքար (որինակ ճակնդեղի, գետնախնձորի կամ գազարի մեջ):

Ճարպը, յուղը, ձեթը, ոսլան և չաքարը, բոլորը միասին ունեն մի ընդհանուր անուն—անսպիտակուցային նյութեր: Այս նյութերը առհասարակ մարմնի մեջ այրվում են և տաքություն առաջացնում: Վերջապես, կերերը, առավելապես խո-

որը և հարդը իրանց մեջ պարունակում են առանձին կոշտ և փայտանման նյութ, փորը անվանվում է փայտանյութ, փորը չատ դժվար և քիչ է մարսվում: Սպիտակուցը կերի այն մասն է կազմում, փորը մարսվելով և արյունը անցնելով, ծառայում է կենդանու մարմինը կազմելուն:

Գիտնականների փորձերը և հետազոտությունները ապացուցել են փոր վոչ բացառապես սպիտակուցից (որինակ, չոռից կամ պանրանյութից) բաղկացած կերով, վոչ ել բացառապես անսպիտակուցային կերով (որինակ՝ չաքարով, ոսլայով կամ յուղերով) կենդանիները սնունդ ստանալ չեն կարող: անպատճառ հարկավոր է, փոր լինի նրանց խառնուրդը: Իսկ յեթե կենդանուն տան մի կեր, փորը յուր մեջ պարունակի բացառապես սպիտակուց, կամ միայն չաքար, այն ժամանակ կենդանին, չնայած կերի մեծ քանակին, կնիհարի և կմեռնի: Որինակ՝ նրա համար, փոր նոր ծնած և առատ կաթ տվող կովը կանոնավոր սնունդ ստանա, հարկավոր է, վոր նրա կերի մեջ մի սպիտակուցային մասին մոտ 5 մաս մյուս, վոչ-սպիտակուցային սննդարար մասեր լինեն:

Նոր ծնած և առատ կաթ տվող կովը միայն այդ տեսակի կերը կարող է կատարելապես մարսել և կաթ դարձնել, իսկ յեթե, որինակ, նրա մեջ 1 մաս սպիտակուցային նյութին համապատասխանի 7 մաս վոչսպիտակուցային սննդանյութ, այն ժամանակ այս ավելորդ 2 վոչսպիտակուցային մասնիկները չեն մարսվի, չողտադորձված աղիքներով կանցնեն աղբը և դուր տեղը կկորչեն: Ընդհակառակը, յեթե կերը այնպես կազմենք, վոր սպիտակուցը լինի ավելի՝ քան հարկավոր է, ըստ կանոնի, այդ ավելորդ սպիտակուցն ել չի մարսվի և առանց մի փորեն ոգուտ տալու կկորչի:

Ուրեմն, կերի բաղադրության մի մասը (սպիտակուցը) չի կարող մարսվել և յուրացվել առանց համապատասխան ֆանակության մյուս սննդարար (վոչ սպիտակուցային) նյութերի: Այս դեպքում կերը կարելի չե նմանեցնել վառողին: Լավ բռնկող վառողի համար հարկավոր է 10 գրամ ծծումբը խառնել 15 գրամ անուխի փոշու և 75 գրամ с е л и т р ы: Այդպիսի խառնուրդը հեշտ կ'բռնկի և կայրվի առանց մնացորդ թողնելու: Իսկ յեթե այս նյութերից վոր և է մեկը վերցվի ավել կամ պակաս, այն ժամանակ ստացված վառուղը թույլ կերպով կբռնկի և չայրված մնացորդ կտա: Ինչպես վառողում, ամեն մի մասը միայն հայտնի չափով վեր առած

տալիս է լավ բռնկող խառնուրդ, նույնպես և սննդի գործում՝ կերը ամբողջովին և առանց մնացորդի չե մարսվում և յուրացվում, յերբ սպիտակուցային և վոչսպիտակուցային մասերը հայտնի չափով են խառնված:

Այս հանգամանքը մենք պարզ կերպով կարող ենք աշակերտի նկարով ներկայացնել: Յեթե կաթնատու կովի կերը մենք մեզ ձևացնենք իրրե՛լ քառակուսի մի մարմին (նկար 1), փորը բաժանված է 2 մասի՝ մեկը փոքր (ս), որինակ 2 կիլո քաշով, սպիտակուցի քանակը ցույց տվող, մյուսը (վս)



5 անգամ ավելի մեծը, 10 կիլո քաշով, վոչ սպիտակուցային մասը: Այդպիսի կերը, փորը յուր մեջ պարունակում է 12 կգ սննդարար մարսելի մասեր, կազմված կլինի կանոնավոր, ամբողջովին կմարսվի և կտա մեծ կիթ:

Այժմ յենթադրենք, թե մյուս կերում սպիտակուցը մի քառորդ չափով, այսինքն $1\frac{1}{2}$ կիլո պակաս է. դրա համեմատ վոչսպիտակուցային մասից համապատասխան, 5 անգամ ավելի չափով, այսինքն $2\frac{1}{2}$ կիլո վոչսպիտակուցային մասը կմնա անմարս և չողտադորձված, աղիքներով կանցնի և աղբի հետ դուրս կնետվի:

Յեթե, ընդհակառակը, կերի մեջ $2\frac{1}{2}$ կիլո վոչսպիտակուցային մաս պակաս լինեք, դրա համապատասխան $1\frac{1}{2}$ կիլո սպիտակուցային մաս կմնար չողտադորձված: Ուրեմն, կերի մի մասն է պակասում թե մյուսը-միևնույնն է՝ մեկը առանց մյուսի, համապատասխան չափով չի կարող յուրացվել կենդանու կազմվածքում և աղիքներով դուրս կանցնի աղբի հետ:

Առաջս ի՞նչ գործնական նշանակություն ունի:

Այն, ինչ վոր մենք վերը բացատրեցինք, մեծ նշանա-
կություն ունի վոչ միայն գիտության տեսակետից, այլ և
գործնականում՝ գյուղատնտեսի կյանքում: Յենթադրենք, թե
մենք նոր ծնած կովին տալիս ենք 6 կիլո խոտ, 4 կիլո հարդ
և 5 կիլո թեփ, ուրեմն, ընդամենը, 15 կիլո զանազան կերեր
բացի այդ, նրան տալիս ենք 24 կիլո ճակնդեղ:

Ասենք, թե այս կովի համար, նրա կիթի համապատաս-
խան հարկավոր է, վոր նրա կերի մեջ լինի 1 կիլո սպիտակուց
և 5 անգամ ավելի, այսինքն 5 կիլո մյուս, վոչսպիտակու-
ցային նյութեր, այսինքն ընդամենը 6 կիլո սննդարար նյու-



թեր: Այս կերերի մեջ պարունակվում է $\frac{3}{4}$ կիլո սպիտակուց,
 $5\frac{1}{4}$ կիլո վոչսպիտակուցային սննդարար մասեր, ընդամենը
6 կիլո, այսինքն այնքան, վորքան հարկավոր է: Բայց այս-
տեղ մի սխալ կա՝ $\frac{1}{4}$ կիլո սպիտակուց պակաս է, իսկ դրա
տեղը նույն չափով վոչսպիտակուցային մասեր ավելի չեն:

Ըստ յերևույթին, այստեղ սննդարար մասերի պակաս
չկա և կովը պետք է լավ կիթ տա. բայց իրապես այդպես չի,
յեթե կերի մեջ $\frac{1}{4}$ կիլո սպիտակուց պակաս է, ուրեմն դրա
համապատասխան $\frac{5}{4} = 1\frac{1}{4}$ կիլո վոչսպիտակուցային մա-
սեր չեն ոգտադործվի կովի սննդի և կաթնատվության հա-
մար: Վոչսպիտակուցային մասերի այս քանակը համարյա
հավասար է տված ճակնդեղի սննդարար նյութերի քանա-
կին: Բայց բավական է տված կերերին ավելացնել $\frac{1}{4}$ կիլո
 $\frac{1}{4}$ կիլո սպիտակուց, վոր վոչսպիտակուցային մասերը ամ-
բողջովին ոգտադործվեն և կաթի վերածվեն. այդ լրացումը
կ'կատարվի, յեթե որվա կերին ավելացվի $\frac{3}{4}$ կիլո քուսպ:

Առանց սպիտակուցային մասերի կաթնատվություն ան-
կարելի է: Բայց յեթե, չնայած դրան, ելի կատարվում է, դրա
պատճառը այն է, վոր մոր կազմվածքը, վորը պարտավոր է
յուր զավակին սնունդ տալ, պակասորդ սպիտակուցը վեր
է առնում յուր սեփական մարմնից և հետևապես լղարում է:

Այդպիսի դրություն իհարկե յերկար տևել չի կարող: Բայց
ինչո՞ւ չի կաթնատու կովը ավելի սպիտակուց պահանջում
յուր կերի մեջ, վորովհետև կաթը յուր մեջ չափ սպիտակուց
է պարունակում, վորը հարկավոր հորթի աճելու համար:
Ամեն մի 10 կիլո կաթի մեջ հորդը ստանում է 400 գրամ սպի-
տակուց, 25 կիլոյում—1 կիլո սպիտակուց:

Այս պատճառով վորքան կովը ավելի կաթ է տալիս,
այնքան նրա կերի մեջ ավելի սպիտակուց պետք է լինի: Ո-
րինակ, յեթե կովը 20—25 կիլո կաթ է տալիս, նրա կերի մեջ
սպիտակուցը պետք է բոլոր սննդարար նյութերի $\frac{1}{5}$ մասից
վոչ պակաս լինի. 15 կիլո կաթ տվող կովի կերը 1 մաս սպի-
տակուցի վրա պետք է $5\frac{1}{2}$ մաս վոչսպիտակուցային նյութ
պարունակի. 8—10 կիլո կիթի դեպքում—6 մաս վոչսպի-
տակուցային նյութ 1 մաս սպիտակուցի, 5 կիլո կիթի դեպ-
քում— $6\frac{1}{2}$ մաս վոչսպիտակուցայինը 1 մաս սպիտակուց և
այլն: Ցամաք, կաթ չտվող կովը, քանի վոր կաթ չունի, սպիտա-
կուց չի արտադրում, ուրեմն և սպիտակուցի մեծ կարիք
չունի: Նա միայն յուր սեփական մարմնի պահպանման
(կենսապահ կեր) և արգանդում աճող պտղի համար է պա-
հանջում հայտնի չափով սպիտակուց: Այդպիսի կովի սպի-
տակուցի պահանջը մեծ չի, բոլոր սննդարար նյութերի հա-
ցիվ $\frac{1}{8}$ մասը:

ԳՆՈՒՆ V

ԿԵՐԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՆՐԱՆՑ ԲԱՂԱԴՐՈՒ- ԹՅԱՆ ՅԵՎ ՍՆՆԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Նոր ծնած, առատ կիթ տվող կովը կաթ առաջացնելու
համար պահանջում է ավելի սպիտակուցային մասեր յուր
սննդի մեջ. քանի կիթը պակասում է, այնքան սպիտակուցը
պահանջը համապատասխան իջնում է. և քանի վոր սպիտա-
կուց պահանջող կերերը ավելի թանկ են, գյուղատնտեսը
պետք է լավ իմանա կերերի բաղադրությունը և հապկու-
թյունները, վոր կարողանա յուր ժամանակին և հարկավոր
չափով տավարին տալ այս կամ այն կերը և ընդհանրապես
սննդամանակ նրանց չափառի, ու անտեսի: Սպիտակուցով ա-
մենաաղքատ կերերը արմատապուրկները և հարդերն են.
նրանց մեջ սպիտակուցի քանակը 20—100 անգամ ավելի
պակաս է, քան վոչսպիտակուցային մասերը: Լավ խոտհար-



քի խոտը շատ սպիտակուց ե պարունակում յուր մեջ, եւ ա-
վելի՛ն՝ ցանած խոտերը—առվույտը, կորնդանը: Եւ այլն: Բայց
եւս առավել հարուստ են սպիտակուցով հացահատիկները,
սերմերը, թեփը, քուսպը, վորոնց մեջ քիչ փայտանյութ կա
եւ առատ սպիտակուց:

Ձեզ այնպես ե թվում, թե այս դատողությունները կերե-
րի բաղադրության մասին աննպատակ են՝ վորո՞տեղից աշ-
խատավորը իմանա ամեն մի կերի բաղադրությունը: Առա-
ջինը՝ կերերի բաղադրությունը իմանալը դժվար բան չի,
քանի վոր նրանք հետազոտված են, եւ պատրաստ, տպված
աղյուսակներ կան, վորոնցից կարելի յե իմանալ ամեն մի
կերի բաղադրությունը: Յերկրորդը՝ վերը ասածները գրվում
եւ վոչ նրա համար, վոր ամեն մի դեպքում տնտեսը յուր
կերերը հետազոտի, այլ նրա համար, վոր նրա համար
հեշտացվի իրերի դրությունը հասկանալը եւ կերերը մեկը
մյուսից զանազանելու գործը: Իսկ գործնական կյանքում
տավարի կերը պատշաճ կերպով կազմելու համար կան հասա-
րակ ձեւեր, վորոնց մասին կխոսենք հետագայում:

Բոլոր կերերը մենք բաժանում ենք մի քանի կարգի, վո-
րոնք զանազանվում են ըստ նրանց սննդարարության: Այն
կերերը, վորոնք իրանց մեջ շատ ջուր են պարունակում, կամ
մեծ ծավալ ունեն, բայց քիչ սննդարարություն, մենք ան-
վանում ենք միծածավալ կերեր: Այս կարգին պատկանում
են խոտ, հարդ, նույնպես արմատապտուղներ՝ ճակնդեղ,
գազար, կարտոֆիլ եւ այլն: Առաջինները անվանվում են
չոր, ծավալային, իսկ վերջինները հյութալից միծածավալ
կերեր:

Մյուս կարգի կերեր, վորոնք քիչ տեղ են բռնում, իրանց
մեջ պարունակում են առատ սննդարար նյութեր եւ քիչ
փայտանյութ, անվանվում են ուժեղ կերեր, վորովհետեւ քիչ
քանակում մեծ սնունդ են պարունակում: Այս կարգին են
պատկանում՝ հացահատիկներ, ալյուր, թեփ, քուսպ, գա-
րեջրի եւ ողու արգյունարերության մնացորդներ, հացի կտոր
տանք եւ այլն:

Մեծ ոգուտ են տալիս, հյութալից կերերը՝ կանաչ խոտը,
կարտոֆիլը, ճակնդեղը, գազարը, բազուկը եւ այլն: Այս կե-
րերը առանձին նշանակություն ունեն կաթնատու կովերի
համար, վորովհետեւ ձմեռը չոր կերը թարմացնելով ձմեռվա
կաթնամթերքներին հազորդում են ամառվա մթերքների

թարմություն, համ ու հոտ: Բացի այդ, թարմ, կանաչ կե-
րերի սննդարար մասերը ավելի հեշտ են մարսվում, յուրաց-
վում, քան միևնույն կերերինը չորացնելուց հետո:

Բացի վերեւ հիշվածներից կան եւ ջրալի կերեր, ինչպես
որինակ, ողի քաշելուց մնացած. դիրտը, գարեջրի դիրտը,
շաքար հանելուց ճակնդեղի մնացորդը եւ այլն: Այս կերերը
իրանք առանձին մեծ սնունդ չեն տալիս, բայց մյուս չոր,
կոպիտ կերերի հետ խառնած տնտեսության մեջ նկատելի
արժեք են ներկայացնում:

Այս բոլոր տեսակի կերերը դիտնականները հետազոտել
են եւ վորոշել, թե վո՞ր կերերի մեջ վո՞րքան սննդարար մասեր
կան: Այստեղ տպված աղյուսակից յերեւում ե, թե վո՞ր կերը
վորքան մարսելի սննդարար նյութ, այսինքն վորքան սպի-
տակուցային եւ վոչսպիտակուցային նյութեր ե պարունա-
կում: Բայց դեռ բավական չե, վոր սննդարար նյութեր լինեն
կերերի մեջ, պետք ե վոր նրանք ե՛լ դյուրամարս լինեն: Ո-
րինակ, սննդարար նյութեր կան թե կաթի, թե սունկի եւ թե
քուսպի մեջ. բայց նրանց դյուրամարսության մեջ մեծ գա-
նազանություն կա՝ կաթի սննդարար նյութերը ստամոքսը
եւ աղիքները ամբողջովին մարսում ե յուրացնում են, քուսպի
սննդարար նյութերը, թեև շատ առատ են, բայց պակաս
մարսվող ե յուրացվող, իսկ սունկի սպիտակուցային մա-
սերը բավական դժվարամարս են: Այս պատճառով կերերի
բաղադրության աղյուսակում ցույց են տրված միայն մարս-
վող սննդարար մասերի տոկոսը:

(№ 1. կերերի բաղադրության աղյուսակը տեսնել հաջորդ
էջում):

Աղյուսակ 1. Կերի բաղադրությունը

Կենսական անոթներ	2	1/2 կերպը		1 կերպը		2 կերպը		3 կերպը		4 կերպը		5 կերպը		10 կերպը		20 կերպը		Կենսական անոթներ
		Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	Սպիտակ-կարմիր	Վառ սպիտակ-կարմիր	
I Կոմպոզիցիոն	1	0.01	0.04	0.02	0.09	0.03	0.19	0.05	0.28	0.06	0.38	0.08	0.47	0.17	0.94	0.34	1.88	1
Սպիտակ-կարմիր	2	0.01	0.07	0.02	0.14	0.03	0.28	0.05	0.42	0.06	0.76	0.08	0.70	0.15	1.40	0.30	2.80	2
Վառ սպիտակ-կարմիր	3	0.01	0.04	0.01	0.08	0.03	0.16	0.04	0.24	0.06	0.32	0.07	0.40	0.15	0.80	0.30	1.60	3
Սպիտակ-կարմիր	4	0.01	0.05	0.02	0.10	0.03	0.21	0.05	0.31	0.07	0.42	0.08	0.52	0.17	1.04	0.34	2.08	4
Վառ սպիտակ-կարմիր	5	0.01	0.06	0.02	0.11	0.05	0.23	0.05	0.34	0.09	0.46	0.12	0.57	0.23	1.14	0.46	2.28	5
Սպիտակ-կարմիր	6	0.01	0.04	0.02	0.09	0.03	0.18	0.04	0.28	0.06	0.37	0.08	0.46	0.16	0.92	0.32	1.84	6
Վառ սպիտակ-կարմիր	7	0.01	0.05	0.01	0.08	0.03	0.16	0.04	0.24	0.06	0.32	0.07	0.39	0.14	0.79	0.28	1.58	7
Սպիտակ-կարմիր	8	0.01	0.05	0.01	0.10	0.01	0.21	0.02	0.31	0.02	0.42	0.03	0.52	0.06	0.88	0.12	1.76	8
Վառ սպիտակ-կարմիր	9	0.01	0.03	0.01	0.09	0.01	0.18	0.02	0.26	0.02	0.35	0.03	0.44	0.06	0.49	0.20	0.98	9
Սպիտակ-կարմիր	10	0.01	0.04	0.01	0.05	0.02	0.10	0.03	0.15	0.04	0.20	0.05	0.24	0.10	0.49	0.20	0.98	10
Վառ սպիտակ-կարմիր	11	0.01	0.04	0.01	0.08	0.03	0.16	0.04	0.24	0.06	0.32	0.07	0.40	0.14	0.80	0.28	1.60	11
II Շարժում	12	0.02	0.21	0.04	0.43	0.08	0.86	0.11	1.29	0.15	1.72	0.19	2.15	0.38	4.30	0.76	8.60	12
Սպիտակ-կարմիր	13	0.01	0.19	0.03	0.38	0.06	0.76	0.10	1.13	0.13	1.51	0.16	1.89	0.32	3.78	0.64	7.56	13
Վառ սպիտակ-կարմիր	14	0.01	0.18	0.02	0.36	0.05	0.72	0.07	1.08	0.10	1.44	0.12	1.80	0.25	3.60	0.50	7.20	14
Սպիտակ-կարմիր	15	0.01	0.21	0.03	0.43	0.06	0.85	0.09	1.27	0.13	1.70	0.16	2.08	0.29	4.16	0.64	8.14	15
Վառ սպիտակ-կարմիր	16	0.01	0.21	0.03	0.42	0.06	0.84	0.09	1.25	0.12	1.66	0.15	2.08	0.29	4.16	0.58	8.32	16
Սպիտակ-կարմիր	17	0.02	0.20	0.05	0.41	0.11	0.82	0.16	1.23	0.22	1.64	0.27	2.05	0.55	4.11	1.10	8.22	17
Վառ սպիտակ-կարմիր	18	0.02	0.20	0.05	0.40	0.08	0.79	0.14	1.19	0.18	1.58	0.23	1.98	0.45	3.97	0.90	7.94	18
Սպիտակ-կարմիր	19	0.02	0.19	0.04	0.38	0.08	0.77	0.12	1.15	0.16	1.54	0.20	1.92	0.40	3.84	0.80	7.68	19
Վառ սպիտակ-կարմիր	20	0.03	0.20	0.05	0.40	0.11	0.80	0.16	1.21	0.22	1.61	0.27	2.01	0.54	4.02	1.08	8.04	20
Սպիտակ-կարմիր	21	0.04	0.16	0.07	0.31	0.15	0.63	0.22	0.94	0.29	1.25	0.37	1.66	0.74	3.13	1.48	6.26	21
Վառ սպիտակ-կարմիր	22	0.04	0.20	0.08	0.41	0.15	0.82	0.22	1.2	0.30	1.63	0.38	2.08	0.75	4.07	1.50	8.14	22
Սպիտակ-կարմիր	23	0.02	0.21	0.04	0.42	0.09	0.84	0.13	1.28	0.18	1.69	0.22	2.11	0.45	4.22	0.90	8.44	23
Վառ սպիտակ-կարմիր	24	0.02	0.18	0.03	0.36	0.07	0.71	0.10	1.06	0.13	1.42	0.17	1.78	0.33	3.56	0.66	7.12	24

25	Սպիտակ-կարմիր (Յեղիպապապա)	0.02	0.22	0.03	0.44	0.06	0.87	0.09	1.31	0.13	1.74	0.16	2.19	0.32	4.37	0.64	8.74	25
26	Վառ սպիտակ-կարմիր	0.02	0.20	0.04	0.35	0.09	0.71	0.13	1.06	0.18	1.41	0.32	1.76	0.44	3.53	0.88	7.06	26
27	Սպիտակ-կարմիր	0.04	0.18	0.08	0.35	0.17	0.73	0.25	1.09	0.36	1.45	0.42	1.81	0.85	3.63	1.70	7.26	27
28	Վառ սպիտակ-կարմիր	0.02	0.21	0.04	0.42	0.07	0.83	0.10	1.25	0.14	1.66	0.18	3.04	0.35	4.16	0.70	8.32	28
29	Սպիտակ-կարմիր	0.02	0.22	0.04	0.43	0.07	0.86	0.11	1.30	0.15	1.79	0.19	2.16	0.37	4.32	0.74	8.64	29
30	III Սկզբի կերպ	0.00	0.06	0.01	0.12	0.01	0.24	0.02	0.36	0.03	0.48	0.03	0.60	0.7	1.20	1.4	2.40	30
31	Սպիտակ-կարմիր	0.00	0.08	0.01	0.17	0.01	0.33	0.02	0.49	0.03	0.65	0.03	0.83	0.07	1.66	0.14	3.32	31
32	Վառ սպիտակ-կարմիր	0.00	0.06	0.00	0.13	0.01	0.25	0.01	0.38	0.01	0.51	0.01	0.63	0.02	1.33	0.04	2.66	32
33	Սպիտակ-կարմիր	0.01	0.04	0.01	0.07	0.03	0.14	0.04	0.21	0.06	0.28	0.07	0.35	0.15	0.70	0.30	1.40	33
34	Վառ սպիտակ-կարմիր	0.01	0.05	0.02	0.10	0.03	0.20	0.05	0.30	0.06	0.40	0.08	0.50	0.17	1.00	0.34	2.00	34
35	Սպիտակ-կարմիր	0.00	0.04	0.01	0.09	0.02	0.19	0.03	0.28	0.04	0.38	0.04	0.47	0.08	0.94	0.16	1.88	35
36	Վառ սպիտակ-կարմիր	0.00	0.04	0.01	0.08	0.01	0.17	0.02	0.25	0.03	0.34	0.03	0.42	0.07	0.84	0.14	1.68	36
37	Սպիտակ-կարմիր	0.00	0.05	0.00	0.10	0.01	0.19	0.01	0.28	0.01	0.38	0.01	0.48	0.03	0.96	0.06	1.92	37
38	IV Հարկի դարձում	0.00	0.20	—	0.35	—	0.70	—	1.05	—	1.40	—	1.73	—	3.46	—	6.92	38
39	Վառ սպիտակ-կարմիր	—	0.20	0.01	0.38	0.02	0.77	0.03	1.16	0.04	1.54	0.05	1.93	0.10	3.86	0.20	7.72	39
40	Սպիտակ-կարմիր	—	0.20	0.01	0.41	0.01	0.82	0.02	1.23	0.02	1.64	0.03	2.07	0.06	4.14	0.12	8.28	40
41	Վառ սպիտակ-կարմիր	0.01	0.21	0.01	0.42	0.02	0.83	0.04	1.25	0.05	1.66	0.06	2.07	0.13	4.15	0.26	8.40	41
42	Սպիտակ-կարմիր (տառային գրություն)	0.00	0.21	0.01	0.42	0.02	0.83	0.04	1.25	0.05	1.66	0.06	2.07	0.13	4.15	0.26	8.40	42
43	Վառ սպիտակ-կարմիր	0.02	0.17	0.03	0.34	0.06	0.68	0.09	1.01	0.12	1.34	0.16	1.68	0.32	3.36	0.64	6.72	43
44	Սպիտակ-կարմիր	0.02	0.17	0.03	0.34	0.06	0.68	0.09	1.01	0.12	1.34	0.16	1.68	0.32	3.36	0.64	6.72	44
45	Վառ սպիտակ-կարմիր	0.02	0.16	0.04	0.32	0.08	0.65	0.12	1.00	0.14	1.35	0.17	1.69	0.34	3.38	0.64	6.76	45
46	Սպիտակ-կարմիր	0.01	0.13	0.02	0.38	0.06	0.78	0.09	1.14	0.12	1.52	0.15	1.89	0.30	3.79	0.60	7.58	46
47	V Արժեքային դարձում	—	0.04	—	0.09	—	0.17	—	0.26	—	0.34	—	0.43	0.01	0.86	0.02	1.72	47
48	Վառ սպիտակ-կարմիր	—	0.05	—	0.10	—	0.21	—	0.31	—	0.42	0.01	0.52	0.01	1.04	0.02	2.08	48
49	Սպիտակ-կարմիր	—	0.10	—	0.21	—	0.42	0.01	0.62	0.01	0.83	0.01	1.04	0.03	2.08	0.06	4.16	49
50	Վառ սպիտակ-կարմիր	—	0.05	—	0.10	—	0.22	0.01	0.28	0.02	0.39	0.02	0.49	0.03	0.98	0.08	1.96	50
51	Սպիտակ-կարմիր	—	0.09	0.01	0.19	0.02	0.38	0.03	0.57	0.04	0.76	0.05	0.95	0.09	1.89	0.18	3.78	51
52	Վառ սպիտակ-կարմիր	—	0.16	0.01	0.31	0.02	0.68	0.03	0.94	0.04	1.25	0.05	1.56	0.10	3.13	0.20	6.86	52

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
53	նիւթ դրում	...	...	0,03	0,07	0,01	0,01	0,14	0,01	0,21	0,02	0,28	0,02	0,35	0,04	0,69	0,08	1,38	53
54	Սնդակի դրում	...	...	0,05	0,10	0,01	0,01	0,20	0,02	0,30	0,03	0,40	0,04	0,50	0,08	1,00	0,16	2,00	54
VI Հացահատիկներ																			
55	վարակի քեթե	...	0,05	0,26	0,09	0,51	0,18	1,02	0,29	1,53	0,37	2,01	0,46	2,55	0,92	5,00	1,84	10,00	55
56	» մլնակ	...	0,04	0,28	0,07	0,56	0,14	1,13	0,21	1,69	0,29	2,25	0,36	2,82	0,72	5,64	1,44	11,28	56
57	Գարի	...	0,03	0,34	0,06	0,68	0,12	1,36	0,18	2,04	0,24	2,72	0,30	3,40	0,61	6,80	1,22	13,60	57
58	Սիմիզոր	...	0,03	0,38	0,07	0,76	0,11	1,52	0,20	2,28	0,26	3,03	0,33	3,79	0,66	7,58	1,32	15,16	58
59	վիկի սեղմ	...	0,10	0,27	0,20	0,53	0,40	1,06	0,60	1,59	0,80	2,12	1,00	2,65	2,00	5,31	4,00	10,62	59
60	Սիւնու	...	0,08	0,27	0,17	0,55	0,34	1,09	0,51	1,65	0,68	2,18	0,85	2,14	1,69	5,47	3,38	10,94	60
61	վոսպ	...	0,10	0,27	0,19	0,53	0,38	1,06	0,57	1,59	0,76	2,12	0,95	2,65	1,91	5,30	3,82	10,60	61
62	Կերի բակա	...	0,10	0,25	0,19	0,51	0,38	1,02	0,57	1,53	0,77	2,04	0,96	2,55	1,93	5,09	3,16	10,18	62
63	Սոյա	...	0,13	0,29	0,26	0,58	0,52	1,16	0,78	1,74	1,85	2,32	1,31	2,90	2,62	5,80	5,24	11,60	63
64	Կերիկ	...	0,04	0,28	0,17	0,55	0,15	1,11	0,22	1,65	0,30	2,21	0,37	2,77	0,74	5,54	1,48	11,08	64
65	Սոյա	...	0,04	0,34	0,07	0,67	0,13	1,34	0,20	2,02	0,26	2,69	0,33	3,36	0,67	6,72	1,34	13,44	65
66	Կանեփի սեղմ	...	0,06	0,46	0,13	0,92	0,26	1,84	0,38	2,76	0,51	3,68	0,64	4,59	1,28	9,17	2,56	18,34	66
67	Արեւածաղիկ	...	0,06	0,44	0,11	0,89	0,22	1,78	0,33	2,66	0,44	3,55	0,55	4,44	1,11	8,88	2,22	17,76	67
VII Այլուր, քեփ, քուս																			
68	Այլուր ու միջոց	...	0,03	0,36	0,06	0,72	0,12	1,44	0,19	2,17	0,25	2,89	0,31	3,61	0,62	7,22	1,24	14,44	68
69	» միջոց	...	0,07	0,26	0,15	0,53	0,29	1,06	0,44	1,69	0,58	2,13	0,73	2,67	1,46	5,33	2,92	10,66	69
70	Ջրաղացի վոյր	...	0,02	0,23	0,04	0,47	0,08	0,94	0,12	1,41	0,16	1,88	0,20	2,35	0,40	4,71	0,80	9,42	70
71	Քեփ ցորենի կոտոր	...	0,06	0,23	0,09	0,46	0,18	0,92	0,27	1,39	0,30	1,85	0,46	2,32	0,91	4,64	1,82	9,28	71
72	» մանր	...	0,06	0,26	0,11	0,51	0,22	1,02	0,33	1,53	0,44	2,14	0,55	2,55	1,11	5,09	2,22	10,18	72
73	Քուսպ կապիկա	...	0,14	0,24	0,27	0,48	0,54	0,95	0,81	1,43	1,09	1,90	1,36	2,38	2,72	4,75	5,44	9,50	73
74	» արեւածաղիկ	...	0,15	0,21	0,31	0,42	0,61	0,83	0,92	1,25	1,22	1,67	1,53	2,09	3,05	4,19	7,10	8,38	74
75	» բամբակ	...	0,19	0,18	0,38	0,32	0,45	0,64	0,68	0,96	0,90	1,28	1,13	1,61	2,26	3,22	4,52	7,24	75
76	» կանեփ	...	0,11	0,16	0,23	0,32	0,45	0,64	0,68	0,96	0,90	1,28	1,13	1,61	2,26	3,22	4,52	7,24	76
77	» սոյա	...	0,19	0,20	0,38	0,41	0,77	0,82	1,15	1,23	1,54	1,64	1,92	2,05	3,84	4,10	2,68	8,20	77
78	Կարմիր չորացրած	...	0,02	0,35	0,04	0,70	0,07	1,41	0,11	2,11	0,14	2,81	0,18	3,52	0,56	7,04	0,72	14,08	78
VIII Կարմիրք																			
79	Կարմիր անարատ	...	0,02	0,07	0,04	0,14	0,07	0,27	0,11	0,41	0,14	0,54	0,18	0,68	0,36	1,36	0,72	2,72	79
80	» քաղցած	...	0,02	0,02	0,04	0,05	0,08	0,10	0,12	0,16	0,16	0,21	0,20	0,26	0,40	0,52	0,80	1,04	80
81	Սիւնու	...	0,00	0,03	0,01	0,07	0,02	0,13	0,03	0,20	0,04	0,27	0,05	0,34	0,09	0,67	0,18	1,34	81
82	Քան	...	0,02	0,03	0,04	0,06	0,08	0,13	0,11	0,19	0,15	0,26	0,19	0,33	0,38	0,66	0,76	1,80	82

ԻՆՉՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԿԵՐԵՐԸ ԸՍՏ ՆՐԱՆՑ ՄԱՆԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՆԷԼ:

Վերը բերած աղյուսակից յերևում է, վոր զանազան կե-
րեր տարբեր բաղադրությունն և հետևապես, զանազան
սննդարար ուժի ունեն. ուրեմն միևնույնն չի, թե վոր կերը
վորով փոխարինել: Իսկ գործնականում, կյանքի մեջ ինչ-
պե՞ս մեկը մյուսից զանազանել և մեկը մյուսով փոխարինել:
Հե՞ վոր ամենայն տեղ միատեսակ կերեր չեն բուսնում, կամ
չուկայում գտնվում:

Իհարկե, ամեն մեկը, ով վերը բերած աղյուսակը ունի
և նրա գործածությունը գիտի, հեշտությամբ կգտնի ամեն
մի կերի սննդարար ուժը: Բայց աղյուսակով սովորաբար
սպասվում են մասնագետները. իսկ գործնական տնտեսու-
թյամբ զբաղվողները գործ են անում 2 միջոցներից մեկը՝
կամ 1) կերի միավորների ոչնությամբ, դանդաղան յեղանա-
կով, կամ 2) ավելի գիտական ձևով, պրոֆ. Քելլների
նսլայի եկվիվալենտների յեղանակով: Բացատրենք այս 2
յեղանակների ելությունը:

Ոսլայի եկվիվալենտներ: Գերմանական գիտնական Ոս-
կար Քելլները բոլոր կերերի սննդարար ուժը համեմատել
է զուր ոսլայի հետ: Յերկարտե տարիների հետազոտու-
թյուններից հետո նա կազմել է մի աղյուսակ, վորից յերևում
է թե վոր կերի 100 գրամը յուր սննդարար ուժով ի՞նչ քանա-
կության ոսլայի յե համապատասխանում: Որինակ, 100
գրամ մարսակ նույնչափ սննդարար ուժ է պարունակում
վորքան 60 գր. ոսլան, 100 գրամ միջակ վորակի չոր խոտը
համապատասխանում է 24 գրամ ոսլայի ուժին: 100 գրամ
արեւածաղիկ քուսպը համապատասխանում է 68 գրամ ոս-
լայի և այլն: Ահա այս թվերը (վարսակի համար 60, խոտի
համար 24 և քուսպի համար 68-ը) Քելլները անվանել է «ոս-
լայի եկվիվալենտներ», այսինքն այդչափ ոսլայի ուժի հա-
մապատասխան:

Կերի միավորներ: Վորքան էլ վոր ոսլայի եկվիվալենտ-
ները և կերերի բաղադրությունը ճիշտ զաղափար տան կե-
րերի սննդարար ուժի մասին, բայց նրանք ելի ունեն մի
անհարմարություն՝ նրանց գործածությունը բավական
զգվար և բարդ է այն մարդկանց համար, վորոնք բավա-
կանաչափ գիտական պատրաստականություն չունեն: Այս

նպատակի համար դործ են ածվում ավելի պարզ, հասարակ և նույնիսկ կիսազրագետ դյուղատնտեսների մատչելի կերի միավորներ, վորոնց հեղինակը դանիացիք են:

Դանիական ուսումնականներ՝ Ֆիորդ, Ֆրիս և ուրիշները, վորոնք այնքան աշխատանք և հոգատարություն են նվիրել իրանց դյուղացիների տնտեսությանը, աշխատել են հասարակ և կիսազրագետ աշխատավոր դյուղացիությանը տալ կերերի սննդարարություն վորոշելու հասարակ և մատչելի ձևեր: Այս նպատակով նրանք մի շարք տարիների ընթացքում զանազան կերերի սննդարար ույթը համեմատել են մեկը մյուսի հետ: Այդ ձևով նրանք գտել են, վոր յեթե կազմվի խառնուրդ հավասար չափով թեփից, քուսպից և դարու ալյուրից, այդ խառնուրդը ընդունել իբրև հիմնական կեր և սրա հետ համեմատվեն մյուս կերերը այն ժամանակ կարելի կլինի դատել, թե վոր կերը և վոր չափով կարելի յե փոխարինել մյուսով: Այդ հիմնական կերի 1 կիլոն նրանք անվանել են կերի միավոր, իբրև մի չափ, վորով կարող են չափվել մյուս կերերը: Այդպիսով յեթե վերհիշված խառնուրդի 1 կիլոն ընդունում ենք իբրև չափ, այսինքն 1 միավոր, այն ժամանակ նրան հավասար սննդարարության ույթ ստանալու համար պետք է վեր առնել 2 կլ. կորնգանի չոր խոտ, կամ 6 կլ կանաչ յերեքնուկ, կամ $\frac{3}{4}$ կլ սիմինդրի ալյուր, կամ 7 կլ. արեվածաղկի սիլոս, կամ 1 կլ. դարեալյուր:

Սկզբնական դանիական կերի միավորները հետազոտված և ստուգված են յեղեւ և փորը ինչ փոփոխված: Այս փոփոխությունը մտցրել է չվեղական գիտնական Ն. Հանսոնը, վորը առաջարկել է 1 միավորի տեղ ընդունել 1 կլ. դարին. այս բանի մասին համաձայնություն է կայացել սկանդինավական 3 տնտեսությունների (Շվեդիա, Դանիա և Նորվեգիա) մասնագետների մեջ, վորոնք նոր կերի միավորը անվանել են Սկանդինավյան կերի միավոր: Վերջնականապես այժմ ընդունված է կերի միավորների հետևյալ № 2 աղյուսակը, վորը ցույց է տալիս, թե վորքան կիլո կեր է հարկավոր 1 միավորի սնունդ տալու համար:

Աղյուսակ № 2

Կերի աւոները

Կանաչ խոտեր

Մորտախտո միջին 5,6 կլ.	
Մարգագետնի խոտ 4,6 »	
Վիկ և դարի խոտ 8 »	
Յերեքնուկ ծաղկած 6 »	
Առվույտ ծաղկած 6,2 »	
Կորնգան » 7 »	
Վիկա » 6,3 »	
Սիմինդր կանաչ 6,7 »	
Կարտոֆիլ » 8,3 »	
Կերի ճակնդեղի » 11 »	
Շաքարի » 8,7 »	

Չոր խոտեր

Մարգագետն լավ խոտ 2 »	
» միջակ 2,8 »	
» վատ 3,2 »	
Տիմոթիյի խոտ. 2,1 »	
Солончково 2,3 »	
Յերեքնուկի լավը 2 »	
» միջակ 2,1 »	
» վատը 2,4 »	
Վիկավարսակի խոտ 2,1 »	
Առվույտի (ծաղկած) 2,4 »	
Կորնգանի 2 »	
Մորտա ծաղկած 2 »	
Մարգ 2,6 »	
Սիմինդր 2,3 »	
Շաքար ծաղկի 2,4 »	
Սոյա 2,2 »	
Սուդանի խոտ 2,1 »	
Մառերի ճուղեր 1,6 »	

Սիլոսիկերեր

Արեածաղկից 1 կլ.	
Սիմինդրից 4,6 »	
Սորգոյից 6 »	
Առվույտից 9 »	
Յերեքնուկից 6,7 »	
Մարգախոտից 1,1 »	
Ճակնդ. կանաչից 8 »	
Կարտոֆիլի » 8 »	
Հարգ դարման	
Ցորենի 5,6 կլ	
Վարսակի 3,9 »	
Գարու 3 »	
Կորեկի 2,1 »	
Սիմինդրի (խոտ գլ) 2,9 »	
Վիկի 4,8 »	
Սիսեռի 3,1 »	
Վոսպի 3,1 »	
Սոյայի 3,1 »	

Հացահատիկներ

Վարսակ թեթև 1 կլ.	
» միջակ 1 »	
Գարի միջակ 0,8 »	
Սիմինդր միջակ 0,1 »	
Վիկի սերմ 0,9 »	
Սիսեռ 0,9 »	
Վոսպ 0,9 »	
Կերի բակլա 0,9 »	
Սոյա 0,1 »	
Կորեկ 1,0 »	
Սորգո 0,8 »	
Կանեփի սերմ 0,6 »	
Արեածաղկի սերմ 0,6 »	
Ալյուր, քեփ, բուսպ	
Ալյուր սիմինդրի 0,8 »	
» սիսեռի 0,9 »	
Ջրաղացի փոշի 1,6 »	
Թեփ (ցորեն) խոշոր 1,4 »	
» » մանր 1,2 »	
Գուսպ կտավատի 0,8 »	
» արեածաղկի 0,9 »	
» բամբակի 0,8 »	
» կանեփի 1,2 »	
» սոյայի 0,8 »	
Կարտոֆիլ չորացր. 0,8 »	
Կարմուրիքի	
Կաթ անաբա 3,4 »	
» քաշած 6,5 »	
Սիճուկ 9 »	
Թան 6,5 »	

ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ինչ ձևով ել վոր վորոշելու լինենք կերերի սննդաբա-
րությունը—կերի միավորներով, թե ստլայի եկվիվալեն-
տով—դա միևնույնն է՝ մենք ամենից առաջ պետք է իմա-
նանք թե վորքան սննդաբար նյութերի կարիք ունի թե կաթ-
նատու և թե չոր կովը. ուրիշ խոսքով մենք պետք է իմա-
նանք «կերակրման նորմաները»:

Բացի այդ կարևոր է, վոր տված կերի մեջ սպիտակուցի
պակասություն չլինի, վորովհետև այդ դեպքում կերը ամ-
բողջովին չի յուրացվի և ոգտագործվի: Բայց և թույլա-
տրելի չի, վոր սպիտակուցը լինի ավելի, քան հարկավոր է,
վորովհետև այն ժամանակ այդ ավելորդը չի յուրացվի
և աղիքներով կանցնի և դուրս կգա աղբի հետ:

Գիտությունը ապացուցել է, վոր կերի մի մասը դործ է
ածվում սեփական մարմինը պահպանելու համար, այսպես
անվանված կենսապահ կերը: Մեծ կենդանին իհարկե ավելի
կեր է պահանջում, քան փոքրը: Այս կերի մեջ պետք է լինի և
հայտնի չափով սպիտակուց, առանց վորի կանոնավոր սնունդ
կատարվել չի կարող լինել:

Բայց չի կարելի ասել, թե 500 կիլոգրամմ, քաշ ունեցող
տավարը 2 անգամ ավելի սննդանյութ է պահանջում քան 250
կիլոգրամմ քաշ ունեցողը կամ թե կարծել, թե 750 կիլոգրամմ
քաշ ունեցող տավարը 3 անգամ ավելի սնունդ է պահանջում,
քան 250 կլ. քաշ ունեցողը: Ամեն մեկը 250 կլ քաշ ունեցող
2 կովը ավելի սնունդ, ավելի կեր կպահանջեն՝ քան մեկը, վորը
500 կլ քաշ ունի, վորովհետև նրանց 2 մարմինը ավելի
կ'ցրտի, ուրեմն տաքանալու համար ավելի արյուն կայրեն,
քան մեկ մեծ կովի մարմինը. 2 կով ամեն մեկը 250 կլ քաշով
ավելի չարժում կգործեն, ուրեմն ավելի արյուն կայրեն, քան
մի հատ 2 անգամ ավելի մեծը ունեցող: Հետևյալ №3 աղ-
յուսակը ցույց է տալիս թե ինչ քաշ ունեցող կենդանու հա-
մար վորքան կերի միավոր և սպիտակուց է հարկավոր նրա
կյանքը պահպանելու համար:

№ 3 ԱՂՅՈՒՍԱԿ՝ ՊԱՀԱՆՁՎՈՒՄ Ե
ԿԵՆՍԱՊԱՀ ԿԵՐ

Ցեթե կենդա- նի քաշն է,	Կերի միավոր	Սպիտակուց (գրամ)
200 կլ	2,6	137
225 »	2,7	145
250 »	2,9	154
275 »	3,0	163
300 »	3,2	172
325 »	3,3	181
350 »	3,5	190
375 »	3,7	198
400 »	3,9	207
425 »	4,0	216
450 »	4,2	225
475 »	4,3	234
500 »	4,5	242

Այս աղյուսակի ոգնությամբ ամեն մի կովի համար կա-
րելի յե վորոշել վորքան կեր (կերի միավորներով հաշված)
պետք է տալ ամեն մի կովին, վոր նրան բավարարի ինչպես
կենսապահ կեր:

Կուպիտ կերի նորման: Իհարկե, սրա համար մշտական
հաստատ նորմա վորոշել անկարելի յե, վորովհետև դա
կախված կլինի նրանից, թե ինչ տեսակի կուպիտ կերեր կլի-
նեն մեր տրամադրության տակ (խոտ, դարման և այլն),
նայած այդ կերերի գնին, կամ թե կա՞ն արդյոք տվյալ տըն-
տեսության մեջ եժան արմատապտուղներ կամ սիլոս, թե
վոչ: Իսկ միջին հաշվով կարելի յե ընդունել, թե կուպիտ
կերը պետք է կազմի կենդանու քաշի մի քառասուններորդ մա-
սը, ուրեմն յեթե կովը 240 կլ. քաշ ունի, մոտավորապես կո-
պիտ կերի քանակը կլինի 6 կլ.:

Բայց պետք չե ասածս այնպես հասկանալ, թե միշտ և
բոլոր դեպքերում այդ նորմայով պետք է տալ կուպիտ կե-
րը, վորովհետև հաճախ ավելի ձեռնտու յե լինում կուպիտ
կերը ուժեղ կամ հյութալից կերերով փոխարինել և դրանով
հիմնական կերի մարսողականությունը բարձրացնել: Բայց
և չափազանց պակասեցնել նրանց քանակը՝ չի կարելի

Թուշլ տալ, վորովհետև առաջինը՝ կովի վորը բնությունից հարմարեցրած է կուպիտ և ծավալային կերերի, յերկրորդը՝ կուպիտ կերերն ուրիշ կերի տրորելուն, մանրացնելուն նպաստում են:

Արդյունավ, ո կամ արտադրական կերի նորման:—Այժմ հարց է ծագում—վորքան կեր կամ ավելի ճիշտն ասած՝ սննդարար նյութ, են հարկավոր կաթ արտադրելու համար: Ինչպես մենք հետազայում կտեսնենք, այդպես, հաստատ նորմա տալ անկարելի յե, բայց հայտնի յե, վոր կովը յուր կազմվածքի նորմալ դրության մեջ (այսինքն յերբ նա այնքան կուշտ է, վոր վոչ գիրանում և վոչ լղարում է) մի կերի միավորից գոյացնում է $2\frac{1}{2}$ կլ. մեր տեղային կովերի կաթ. իսկ ջրալի կաթ (որինակ հոլլանդական կովինը) կտա և ավելին: Այս չափը, նորման, մենք անվանում ենք ֆիզիոլոգիական նորմա, այսինքն կերի այն քանակը, վորից պակաս ու ավել կիթը կպակսի և կենդանին կլղարի:

Բայց, իհս ձև, ամեն տեսակ կեր միանման ազդեցություն չի ունենում կիթի վրա, մեկից ավելի, մյուսից պակաս կիթ կավելանա: Մենք գիտենք, վոր մի հայտնի չափով կիթ ստանալու համար կենդանու կազմվածքը պահանջում է համապատասխան չափով սպիտակուցային մասեր կերի մեջ և յեթե սպիտակուցի այդ չափը չտանք, չենք ել կարող սպասել համապատասխան կիթ: Որինակ, որական 25 կիլո կաթ տվող կովը յուր կիթի մեջ 1 կիլո սպիտակուց է արտադրում. պարզ է, վոր յեթե կենդանին սպիտակուցի այդ քանակը չստանա, չի յել կարող նրան արտադրել:

Արտադրական կերի միջի սպիտակուցային մասի չափը, նորման: Այդ չափը, այդ նորման կարելի յե վորոշել՝ ամեն մի 5 կիլո կաթին $\frac{1}{4}$ կիլո սպիտակուցային մաս կերի մեջ, կամ 20 կիլո կիթին—1 կիլո սպիտակուց:

Վերջապես, աչքի առաջ պետք է ունենալ և մեկ հանգամանք. մոր արգանդում պտուղը, հորթը ծնվելուց առաջ արդեն այնքան մեծ է, վոր արդեն մորից պահանջում է նկատելի չափով սնունդ, այսինքն մայրական արյուն: Այդ պատճառով հղիության վերջին 2-3 ամիսը, նայած մոր (հետեապես և հորթի) մեծության, պետք է հաշվել որական 80-ից մինչև 100 գր. սպիտակուց ավելի:

Ի՞նչպես այս նորման կերի միավորներով վորոշել:

Մեր տեղային կովերի հորթի կենդանի քաշը կարելի յե հաշվել 20 կիլոգրամից վոչ ավել. այդպես հորթի սննդի համար հարկավոր է տալ որական 3-3 $\frac{1}{2}$ կլ. կաթ, վորը համար է 1 կերի միավորի: Ուրեմն, կովի հղիության վերջին շրջանում իբրև հորթի բաժին պետք է 1 կերի միավոր ավելացնել:

Կ Լ Ո Ւ Ե VIII

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿԵՐԻ ՈՐԱԲԱԺԻՆ

Անցած գլուխներում բերած մեր դատողություններից և տվյալներից պարզվում է, վոր կերի արաբաժինը կազմելուց մեկ պետք է աչքի առաջ ունենանք թե կենսապահ կերը, թե հորթի արգանդային սննդի բաժինը և թե կիթի ըստ կարելույն մեծ քանակը:

Կենսապահ կերի քանակը հեշտ է վորոշել յերես 29 ում դետեղված № 3 աղյուսակի միջոցով. որինակ, 400 կլ. քաշ ունեցող կովին պետք է տալ 20 կ. գրամ սպիտակուց, իսկ կերի ամբողջ արաբաժինը պետք է այնպես կազմված լինի, վոր նրա սննդարարությունը վորոշվի 3,9 (մոտ 4) կերի միավորով:

Վորքան կեր պետք է ուրեմն ավելացնել իբրև կիթի բաժին. բացի այդ, կարելի՞ յե արդյոք նախորդ վորոշել թե ինչ կիթ կովը կտա կամ մինչև վոր աստիճան կարելի յե նրա կիթը կերի ուժով ավելացնել:

Վոչ, այդ բանը նախադուշակել անկարելի յե, վորովհետև զանազան կովեր միահավասար չեն ավելացնում իրենց կիթը և նրանց կաթը յուր արտադրական ծախսերով միահավասար չե նստում յուրաքանչյուր կովի կիթում: Տնտեսության տեսակետից մենք այդ հարցին այսպես ենք մոտենում. մենք մտածում ենք՝ կովը պետք է ըստ կարելույն չափ կաթ տա, բայց նրա կերը պետք է լինի ձեռնառու ըստ կարելույն առատ կիթ տալով:

Ի՞նչ ձևով իրականացնել այս:

VII գլխում ասել եյինք, թե արդյունավետ կերի ամեն մի միավորը կարող է տալ մոտ $2\frac{1}{2}$ կիլո կաթ: Ի՞նչպես պետք է սա հասկանալ: Նշանակում է սա արդյոք թե, յեթե հիմնական կերին ավելացնելու լինենք արդյունավետ կեր, վերջինս յուրաքանչյուր կերի միավորից 2-2 $\frac{1}{2}$ կիլո կաթ կտա: Ձե՛, այդպես չե. 2-2 $\frac{1}{2}$ կիլո կաթ միջին

Թիվ Ե, վորը ցույց Ե տալիս, վոր կովը կաթ Ե արտադրում
առանց գիրանալու և լղարելու: Իսկ կովի ամենամեծ կիթն
ստանալու ձեռնառու կերպով կերակրելու ձևը ուրիշ Ե: Բա-
ցատրենք:

Նոր ծնած կովը այնքան ուժեղ կերպով Ե կաթ ար-
տադրում, վոր նույնիսկ յեթե բավականաչափ կեր չի ստա-
նում, ավելի կաթ Ե արտադրում, քան նորմայով պետք Ե
լիներ, ուրեմն յուր սեփական մարմնին ի վնաս, այսինքն
լղարելով: Այդպիսով, կաթնատվության նախնական շրջա-
նում աղքատիկ կեր մատակարարելու դեպքում, 1 կերի
միավորից կարող Ե 3, նույնիսկ 4 և ավելի կիլո կաթ
ստացվել: Յեւ այդպիսի դեպքեր բավական հաճախ տեղի
յեն ունենում գյուղական կյանքում: Իհարկե, դա չի նշա-
նակում, վոր հենց այդպես Ել պետք Ե կերակրել՝ այդ ձե-
վով մենք միայն այն հետևանքին կզանք, վոր կովն Ել կլղա-
րի, կիթն Ել շուտով կապկսի:

Յենթադրենք, թե մի կով, վորի կենդանի քաշը 275
կիլո յե, ծննդի սկզբում որական 7 կիլո կաթ Ե տալիս և
սննդի համար ստանում Ե՝

4 կիլո մարգարեանի խոտ վոր հավասար Ե	1 1/3 կերի միավորի
4 » հարդ » »	1 » »
1 » գարեալյուր » »	1 » »
2 » թեփ » »	12/3 » »

11 կիլո կեր, վոր հավասար Ե 5 կերի միավորի

Ըստ աղյուսակի № 3-ի այդ կովին (275 կիլո կենդանի
քաշ) հարկավոր Ե 3 կերի միավոր կենսապահ կեր, վորը
դուրս գալով 5 միավորից՝ մնում Ե կաթի բաժին 2 կերի
միավոր: Այս մնացորդ կերի ուժով կովը 7 կիլո կաթ Ե
տալիս, այսինքն ամեն 1 կերի միավորից 3 1/2 կիլո կաթ:
Ըստ նորմայի կովն այս կերաբաժնից կարող Եր հազիվ
5 կիլո կաթ տալ, պարզ Ե, վոր 2 կիլո ավելորդ կիթը
ստացվում Ե մոր մարմնից, նրա լղարելու ուժով: Հասկա-
նալի յե, վոր այդ դրությունը յերկար շարունակվել չի
կարող՝ կովը կլղարի և կիթը շուտով կապկսեցնի:

Այս հաշիվներից պարզ Ե, վոր կերը պակասում Ե և
նրա քանակը պետք Ե ավելացնել: Յենթադրենք թե մենք
թեփի և քուսպի խառնուրդ տալով ավելացրինք 2 կերի

միավոր և այսպիսով արդյունավետ կերի քանակը դար-
ձալ 4 միավոր: Յեթե կիթն այժմ հասնի 10 կիլոյի, դուրս
կդա, վոր ամեն մի միավոր արդյունավետ կերից ստաց-
վում Ե 2 1/2 կիլո կաթ, վորը ճշտությամբ հավասար Ե Փի-
զիլոգիական չափին, նորմային, այժմ կովը վոչ կլղարի
և վոչ Ել կգիրանա:

Արդյո՞ք հասանք մենք կերակրման սահմանին: Կա-
րո՞ղ ենք մենք շարունակել կերն ավելացնել, թե արդեն
հասած ենք կերակրման սահմանին, նորմային:

Ինչպես իմանանք մենք այն սահմանը, յերբ պետք Ե
դադարենք կերն ավելացնել:

Միևչև Փիզիլոգիական սահմանը.

Թե՞ կա մի ուրիշ նշան, վորով գյուղատնտեսը ճշտու-
թյամբ կվորոշի կերի քանակը, վորը տնտեսական տեսա-
կետից լինի ամենանպատակահարմարը:

Ինչպես վերն ասված Ե, կերն ավելացնել պետք Ե մին-
չև այն սահման, քանի վոր տեղային (կաթի և կերի) գնե-
րով դա ձեռնառու յե: Վեր առնենք միևնույն որինակը և
հաշվենք վոչ կերի և կաթի քանակի հարաբերությունը, այլ
կերի և կիթի գների հարաբերությունը, յենթադրելով,
վոր մի կերի միավորը մեզ նստում Ե 15 կոպ., իսկ մի կիլո
կաթի ծախու գինն Ե 20 կոպեկ:

Կերակրելու ընդհանուր կանոնն այստեղ կլինի հետե-
յալը: Ծնելուց առաջ մենք կովին տալիս ենք թեթև և սնն-
դարար կեր, վոր ստամոքսը շատ ծանրաբեռնված չլինի և
չնշառությունը չզգվարանա՝ քիչ հարդ, ավելի չափով
խոտ, վորին կարելի յե ավելացնել 1/2-1 կիլո գարե ալյուր:
Միևնույն ժամանակ պետք Ե հետևել կրծի դրությանը՝
յեթե նա շատ Ե ուռչում՝ պետք Ե կիթել և արտադրվող խեժը
հեռացնել:

Ծնից հետո պետք Ե շարունակել կերակրել խոտով և
խմելու համար պատրաստել յեփած ու սառած գոլ խմիչք՝
կտավատի սերմից, գարե ալյուրից կամ կտավատի քուս-
պից. այս կերերի քանակը 1 կիլոյից ավել չպետք Ե լինի:
Յերկրորդ շաբաթը, յերբ կովն արդեն մաքրվել Ե ծննդա-
տեղից, կազմվածքը կազդուրվել Ե և նորմալ դրություն
Ե ստացել, կարելի յե սկսել հարդ տալ և կամաց կա-
մաց ուժեղ կերեր ավելացնել: Այս կերերի քանակը մենք

մինչև այն աստիճան ենք հասցնում, վոր կիթն ըստ կարելույն բարձրանա, ձեռնտու մնալով:

Մենք արդեն լավ գիտենք, վոր ծննդյան սկզբում կովին կարելի չե չատ առատ կերակրել և դրանով ստիպել տալ առատ կիթ, վորի քանակը, այսինքն կիթառատության աստիճանը, զանազան ե զանազան կովերի համար: Կան խոշոր և մանր կովեր, կան կաթնատու և սակավակիթ կովեր—մեկը 200–250 կիլո կենդանի քաշով, մեկը 350–400 կիլո, կան և 500–600—ից ավելի մեծերը: Մեկը շատակեր ե, մյուսը սակավակեր, մեկի կուրծք մեծ և առաճգական ե, մյուսինը կարծր ու փոքր: Հասկանալի չե ուրեմն, վոր զանազան կովեր միևնույն ձևերով կերակրելուց զանազան կիթ են տալիս. հետևապես զանազան ե այն սահմանը, մինչև վոր աստիճան կարելի չե կերակրել, ուժեղացնել և համապատասխան կիթ ստանալ: Սա ել յուրատեսակ վարպետություն ե, վորը ղեկավար և բարդ չե: Հետևենք քայլ առ քայլ կերակրման ընթացքին:

1. Ենթադրենք, թե նոր ծնած, 275 կիլո կենդանի քաշ ունեցող կովը ծնելուց մի շաբաթ անց որական 8 կիլո կաթ ե տալիս և ստանում ե կեր, վորը յուր սննդարարությամբ հավատար ե 5 կերի միավորի: Այդպես կենդանի քաշ ունեցող կովին հարկավոր ե (աղյուսակ 3) տալ 3 կերի միավոր իբրև կեն սաղահ կեր: Ուրեմն կաթ արտադրելու համար մնում ե 2 կերի միավոր, վորից ստացվում ե 8 կիլո կաթ, այսինքն ամեն մի կերի միավորից 4 կիլո կաթ. իսկ կովն առանց վնասի յուր կազմվածքի համար կարող ե միայն $2\frac{1}{2}$ կիլո կաթ արտադրել, ուրեմն նա այդ կիթը տալիս ե ի վնաս յուր կազմվածքի: Ինչպես մենք պետք ե վարվենք այդ դեպքում: Հետևենք քայլ առ քայլ մեր գործողություններին:

2. Քանի վոր նոր ծնած կովին միանգամից առատ կերակրել չի թույլատրվում (կուրծք կարող ե վնասվել, գեղձերի բարբոթում առանալ) մենք սկզբում ավելացնենք որով սննդին $\frac{1}{2}$ կերի միավոր, ուրեմն ընդամենը կտանք $2\frac{1}{2}$ կերի միավոր արդյունավետ կեր (տես աղյուսակ №4): Յենթադրենք, թե կովը կիթն ավելացրեց և 9 կիլոյի հասցրեց: Սա կնշանակի, վոր $2\frac{1}{2}$ միավոր կերից կստացվի 9 կլ կաթ կամ 1 միավորից 3,6 կլ. կաթ, այսինքն, դեռ նորմա-

լից ավել. այս դեպքումն ել կովը պետք ե նիհարի և կիթը կորցնի, պակասեցնի:

3. Նորից ավելացնում ենք 1 կերի միավոր և ստանում ենք $10\frac{1}{2}$ կլ. կաթ, վորի արտադրելու համար միթերված ե (կենսապահ կերից վեր) $3\frac{1}{2}$ կերի միավոր այս դեպքում ստացվում ե $10\frac{1}{2}$ կիլո կաթ, ուրեմն ամեն մի միավոր արդյունավետ կերից 3 կիլո կաթ, այսինքն ելի նորմալից վեր: Կովը բավականաչափ կաթ չի տալիս, ինքն ել նիհարում ե:

4. Ավելացնում ենք ելի 1 կերի միավոր և այդպիսով դուրսնում ե $4\frac{1}{2}$ միավոր, վորից ստացվում ե 12,6 կիլո կաթ, կամ մի միավորից 2,8 կիլո կաթ. սա դեռ նորմալից վեր ե, ուրեմն սնունդը բավարար չի և պետք ե ավելացնել:

5. Նորից 1 կերի միավոր ավելացնելով մենք ստանում ենք $5\frac{1}{2}$ կերի միավոր, վորից ստացվում ե 13,7 կիլո կաթ կամ 1 միավորից ուղիղ $2\frac{1}{2}$ կիլո, կաթ, վոր հավասար ե ֆիզիոլոգիական նորմալին, յերբ կովը վոչ կգիրանա, վոչ կլղարի:

Արդյո՞ք նշանակում ե սա, թե մենք հասել ենք նորմալ, կանոնավոր կերակրման սահմանին: Վո՞չ: Սա միայն նշանակում ե, վոր այժմ կովի կազմվածքը հազեցրած ե և այդս չի նիհարի. ինչ վերաբերում ե կաթնատվության, այդտեղ ուրիշ հաշիվներ կան:

Մենք հաշվում ենք վոր մի կերի միավորը, ինչպես վերը ասված ե, արժե 15 կուպեկ, իսկ կաթի կիլոն 20 կուպ., ուրեմն հաշիվ կա նորից 1 միավոր կեր ավելացնելու: Յենթադրենք, թե այդ հավելումից հետո կիթը հասնում ե $8\frac{1}{3}$ կիլոյի: Հաշվենք մեր ծախսը և արդյունքը. $\frac{1}{2}$ կերի միավորն արժե $7\frac{1}{2}$ կուպ., կես կիլո կաթն արժի 10 կուպ., ուրեմն ձեռնտու չե:

6. Շարունակում ենք կերն ուժեղացնել և այժմ նորից ավելացնում ենք 1 կերի միավոր, ուրեմն ընդամենը տալիս ենք $6\frac{1}{2}$ կերի միավոր արդյունավետ կեր ու ստանում ենք 14,7 կիլո կիթ, այսինքն մի կերի միավորից (14,7:6,5) $2\frac{1}{2}$ կիլո կաթ և ավելացրած 1 կերի միավորի հանդեպ, վոր արժե 15 կուպ., կստանանք 1 կիլո կաթ, վորի դինն ե 20 կուպ.:

7. Յեկ քանի վոր ձեռնտու չե, նորից ավելացնում ենք 1 կերի միավոր, ընդամենը 7,5 միավոր. կիթը հասնում ե 15,7 կիլոյի: Մեկ միավոր կերն արժե 15 կուպ., իսկ մեկ կիլո կաթը—20 կուպ.: Ձեռնտու չե:

8. Ծարունակում ենք կերն ավելացնել: Նորից 1 կերի միավոր ավելացնելով նոր ծախս ենք անում 15 կոպ. կիթն ասենք ավելացավ $1\frac{1}{2}$ կիլո, վորի արժեքը 10 կոպեկ է. ուրենմ մենք հասանք կերի ուժեղացման սահմանին: Այժմ արդեն ձեռնառու չի կեր ավելացնելը՝ գինը չի հանում:

Վերը բերած բոլոր հաշիվները պարզ յերևում են հետևյալ №4 աղյուսակից:

№ 4 Աղյուսակ

№ №	Կերի միավորներ	Ֆիթը	1 միավոր կերից ըստացված կաթը	Վերջին ավելացրած կերից ըստաց. կաթ.	Ավելացրած գինը	
					Կերի	Ֆաթի
1	2	8	4	—	—	—
2	$2\frac{1}{2}$	9	3,6	2	40	—
3	$3\frac{1}{2}$	10,5	3,0	1,5	30	—
4	$4\frac{1}{2}$	12,6	2,8	1,1	22	—
5	$5\frac{1}{2}$	13,7	2,5	1,1	22	—
6	$6\frac{1}{2}$	14,7	2,3	1	20	—
7	$7\frac{1}{2}$	15,7	2,1	1	20	—
8	$8\frac{1}{2}$	16,2	1,9	0,5	10	—

Այս աղյուսակից պարզ է, վոր կեր ավելացնելու նորման, սահմանը №5-ը չի, ուր ստացվում է Ֆիզիոլոգիական նորման (1 կերի միավորից $2\frac{1}{2}$ կիլո կաթ), այլ №7-ը, վորից հետո կեր ավելացնելն ել ձեռնառու չի՝ հետևյալ կերի հավելումը (20 կոպեկի) վարձատրվում է միայն կես գնի կաթով ($1\frac{1}{2}$ կիլո—10 կոպեկի):

Բայց ուրիշ հանգամանքներում կեր ավելացնելու սահմանը կարող է ել ավելի հեռուն գնալ. որինակ՝ յեթե մերձքաղաքային անտեսություն լինի, վորտեղ կերի գները քիչ գանազանվեն, բայց կաթի գինը լինի կրկնակի:

Վերը բերած կամաց կամաց կերի ավելացնելը շարունակվում է մոտ 3 չափաթ, յերը կիթը կհասնի յուր զառաթնակետին: Այս ամենաբարձր կիթը շարունակվում է շատ կամ քիչ, նայած կովին, 2 կամ 3, նույնիսկ 4 ամիս: Հետո աստիճանաբար սկսում է պակասել կիթը և հետևապես աված արդյունքներն ել պակասում է:

Այժմ մենք նորից սկսում ենք մեր հաշիվները, բայց արդեն ուրիշ ուղղությամբ: Մենք մտածում ենք՝ մինչև այժմ կովն ստանում եր կովիտ կերեր և 7-8 կիլոգրամ ու-

ժեղ կերեր, վորոնց փոխարեն նա տալիս է 15-16 կիլո կաթ: Յեթե 2-3 ամիս անց նա պակասեցնում է յուր կիթը 2-3 կիլո, դա նշանակում է, վոր կուրծը, գեղձերն արդեն հոգնել են և անկարող են առաջվա պես կաթ արտադրել. հետևապես կովի կազմվածքն անկարող է բոլոր ստացած կերը յուրացնել և կաթի վերածել, ուրեմն մենք կարող ենք դրա համապատասխան կերի մի մասը պակասեցնել. հակառակ դեպքում այդ ավելորդ կերից կովը կգեւանա և ևս առավել կիթը կպակասեցնի: Հենց այդպես ել մենք վարվում ենք՝ քանի վոր կովը յուր կիթը իջեցնում է, դրա համապատասխան ուժեղ կերն ել մենք պակասեցնում ենք այն հաշվով, վոր $2\frac{1}{2}$ կիլո իջեցրած կիթին մի կերի միավոր պակասի:

Դուք տեսնում եք, վոր կերի քանակն աստիճանաբար ավելացնելով մենք ստիպում ենք կովին կիթը բարձրացնել. իսկ այժմ կովը չի հետևում մեր կամքին, այլ ընդհակառակը՝ մենք ենք հետևում կիթի քանակին և նրա համապատասխան պակասեցնում ենք կերը: Այդպիսով ամսե ամիս աստիճանաբար կերը պակասեցնելով նրա քանակը հասցնում ենք 1 կիլոգրամի:

Այժմ մենք հեշտությամբ կրացատրենք, թե ինչ եր պատճառը, վոր դրբույկիս սկզբում հիշած Ե և Բ տնտեսություններում (տես յերես 5) տարբեր կիթ եր ստացվում, չնայած վոր յերկուսումն ել համարյա միատեսակ և միևնույն չափով կեր եր գործ ածվում:

Առաջին (Ե) տնտեսության մեջ կերերը ճիշտ այն ձևով եյին մատակարարում, ինչպես այս գլխում բացատրել ենք. այստեղ կովերը ծնում եյին նոյնմբեր-դեկտեմբեր ամիսներին, յերը ուժեղ կերերի քանակը հասցնում եյին մինչև 5-6 կիլո. հետո, յերը կիթը սկսում եր պակասել, դրա համեմատ կերերի չափն ել աստիճանաբար պակասեցնում եյին և գարնան արոտ ուղարկելուն մոտ հասցնում եյին $1\frac{1}{2}$ -1 կիլոյի, նայած թե ինչ դրության մեջ են արոտի խոտերը: Այս կերերն արածելու չըջանումն ել տալիս եյին, մինչև վոր համոզվեյին թե արոտն արդեն բոլորովին բավարարում է կովերի աննդի պահանջներին և վոր կիթը վոչ թե չպակասի, այլ կանաչ խոտ ուտելուց գեւ քիչ ել ավելանա: Աշունքին, յերը կովերն արոտից տուն եյին վերադառնում կուշտ և քիչ ել գիրացած՝ կիթն ել պակաս եր լի-

նում կամ բոլորովին ցամաքած—ուժեղ կերերի քանակը պահանջներում էյին մինչև $\frac{3}{4}$ —1 կիլո:

Յերկրորդ տնտեսությունը (Բ) ուրիշ կարգ ու կանոն եր մտցրել՝ աշունքից, յերբ տավարը նոր էյին արոտից տուն բերում, և մինչև դարունը, այսինքն մինչև հետևյալ արոտն ամեն որ ամբողջ հոտի համար տալիս էյին այնքան ուժեղ կեր, վոր ամեն մի կովին բաժին հասներ $1\frac{1}{2}$ կիլո: Ուրեմն այդ ձևով նոր ծնածը և թե ցամաքելուն մոտ տավարը ստանում էյին միևնույն քանակի ուժեղ կեր: Պարզ է, վոր $1\frac{1}{2}$ կիլո կերով նոր ծնածները չէյին կարող բավարարվել և կիթն այն բարձրության հասցնել, ինչպես է տնտեսության մեջ, վորտեղ $3\frac{1}{2}$ —ից մինչև 5 կիլո ուժեղ կեր եր մատակարարվում:

Այդպիսով այդ տնտեսության կովերն ամենակաթնատառ ժամանակը մնում էյին կիսասոված, գարնան գեմ լղարում էյին և այդպես արոտ զնալով, այնտեղ ել ամբողջովին իրանց կիթն առատացնել չէյին կարողանում, քանի վոր կերի մի մասը ստիպված էյին գործ ածել իրենց մարմինը կշտացնելու և կարգի բերելու համար: Իսկ աշունքին այդ ժամանակվա աղքատիկ կիթի համեմատ այն $1\frac{1}{2}$ կիլո ուժեղ կերն ել չատ եր՝ կովը դուր տեղը գիրանում եր և կիթն ել չեր ավելանում, ծնելն ել դժվարանում եր:

Հետևանքն այն եր լինում, վոր ձմեռվա ընթացքում այստեղ նույնչափ կեր եր ծախսվում, վորքան և է տնտեսության մեջ, իսկ կիթը հազիվ սրա կեսին եր հասնում: Գործի գաղտնիքը նրանումն եր կայանում, վոր այս տնտեսությունը գիտեր կերերի կանոնավոր ոգտագործելու ձևը, փոփոխելով նրանց քանակը $1\frac{1}{2}$ —ից մինչև 5 կիլո կաթնատվության շրջանում և տնտեսելով նրանց ցամաքելու շրջանում: Հենց վոր այս կարգն ու կանոնը փոփոխվեց և կանոնավոր կեր մատակարարելու ձևը մոցվեց, կիթն ել փոխվեց և հասավ ավելի բարձր աստիճանի:

Ուրեմն արդյունավետ կերակրելու գաղտնիքը վոչ թե շատ կեր տալումն է կայանում, այլ նրա կանոնավոր բաժանելու ձևում, քստ տարվա ժամանակի և կիթի բարձրություն:

Գ Լ Ո Ի Ե Ի X

ԿԵՐԵՐԻ ԶԱՓԱՎՈՐՄԱՆ ՈՐԻՆԱԿՆԵՐ

I Կովը 300 կիլոգրամ (3 ցենտներ) կենդանի քաշ ունի: Նոր ծնելուց տալիս է 5 կիլո կաթ: Ստանում է կեր որական:

10 կիլո դաշտի խոտ, 4 կիլո հարդ: Ուժեղ կեր կարելի չէ ունենալ գարե ալյուր 36 ուրբով ցենտները, բամբակի ֆուսպ 12 ուրբով, քեփ 9 ուրբով: Բացի այդ ֆակնդեղ 1 ուրբով, աւվույտի խոտ 14 ուրբով, կարտոֆիլ—30 ու և սիմինդրի սիլոս 80 կոպ:

Ի՞նչպես վորոշել կերի նորման:

Ամենից առաջ մենք պարզում ենք թե հիշված կերերից վորի՞ մեջ մենք կստանանք ամենաեթան սննդարար մասը, կամ մի կերի միավորը: Այս նպատակով մենք պետք է վորոշենք թե այս կերերից ամեն մեկում վորքան կերի միավոր կա մի ցենտներում և վորքան է նստում 1 կերի միավորը:

Հետևյալ աղյուսակը (№ 5—ը) ցույց է տալիս այդ.

Աղյուսակ № 5. կերերի միավորների արժեքը

Գերի անունը	1 ցենտների գինը	Վորքան կերի միավոր կա ցենտներում	1 կերի միավորի արժեքը
Դաշտի խոտ	12 ուրբի	36 կերի միավոր	$3\frac{1}{3}$ կոպ
Աւվույտի խոտ	14 »	42 » »	$3\frac{1}{3}$ »
Դարման (խոտն)	2 ու 40 կոպ.	23 » »	$10\frac{2}{5}$ »
Բամբակի ֆուսպ	12 »	125 » »	$9\frac{1}{2}$ »
Քեփ	9 »	72 » »	$12\frac{1}{2}$ »
Ճակնդեղ	1 »	10 » »	10 »
Կարտոֆիլ	30 »	33 » »	90 »
Դարեալյուր	25 »	125 » »	20 »
Սիմինդրի սիլոս	80 կոպ.	22 » »	$3\frac{2}{3}$ »

Այս աղյուսակից յերևում է, վոր կարտոֆիլը մեր կերերից բոլորովին պետք է դուրս հանել, քանի վոր կերի միավորը այստեղ չափազանց թանկ է նստում: Յերկու տեսակի խոտերի միավորներն ել թանկ են նստում, բայց քանի վոր առանց խոտի որարածին կազմելն անհարմար է, մենք նրանց քանակն ըստ կարելույն կպակասեցնենք: Գարե ալյուրը բոլորովին մեր հաշվից կհանենք, քանի վոր մենք մեր տրամադրության տակ կարող ենք ունենալ պատվական կերեր՝ ինչպես ֆուսպը և թեփը, վորոնց կերի միավորը նստում է 3 անգամ ավելի եթան: Ծավալային կերերից մեծ աղաղբության արժանի չէ սիլոսը, վորի կերի միավորը

4 կողմերից եծան և նստում. ճակնդեղն էլ ուշադրության արժանի կեր է ներկայացնում այստեղ, թեև վոչ այնքան էծան:

Ուրեմն այս դեպքում որարածնի հիմքը կկազմի գլխա-վորապես վոչ թե խոտը, այլ դարմանը և սիլոսը, վորին կավելացվի քիչ խոտ և ճակնդեղ. իսկ արդյունավետ կերը կկազմեն թեփը և քուսպը: Վերջին 2 կերը կհարստացնեն սնունդն սպիտակուցով, վոր կարևոր է կաթ արտադրելու համար, իսկ սիլոսը և ճակնդեղը կտան ավելի փափուկ և դեղին կարագ, ինչպես ամառվա յուղը:

Կովն ստանում է որական 10 կիլո խոտ, վոր շատ թանկ է նստում. նրա քանակը մենք կսահասացնենք մինչև 3 կիլո և դրա տեղ կտանք 10 կիլո սիլոս և 5 կիլո ճակնդեղ: Ու-ժեղ կերը կկազմի թեփի և քուսպի խառնուրդից, ինչպես բացատրված էր VIII գլխում: Սպիտակուցով ամենատղբատ կերն այստեղ ճակնդեղն է, վորի քանակը որարածնի մեջ շատ կամ պակաս կլինի, նայած այն պաշարին, վորն ունի տնտեսությունը: Դրա համեմատ էլ ավելի կամ պակաս քուսպ կտանք, վորովհետև ճակնդեղը համարյա զուրկ է սպիտակուցից, իսկ քուսպն ամենահարուստ կերն է սպի-տակուցով:

Այդպիսով մենք թանկագին խոտը կփոխարինենք ար-մատապատուցով և սիլոսով, իսկ այս կերերի սպիտակուցի պակասը կլրացնենք քուսպի և թեփի խառնուրդով և նրան-կավելացնենք այնպես, ինչպես նկարագրված է նախորդ յերե-սում. այդպես կազմված կերը նպատակահարմար կլինի:

Այս կերերի քանակը, նայած կովի կիթին, կլինի և դանդաղան կարող է լինել:

1) Տնտեսությունն ապահովված է խոտով. մոտ 8 կիլո ամեն մի կովին, հարգն առատ. վոչ ուժեղ կեր, վոչ ար-մատապատուց չունի: Գնովի կերերի գինն է՝ խոտը 12 ու-ցենտները, գարն ալյուրը՝ 5 ու. 20 կ., քուսպը՝ 4 ու. 80 կ.: Ձմեռվա կերակրելը 180 ուր է շարունակվում:

Ի՞նչպես կերակրել տավարն առանց գումար պահանջե-լու, վորը տնտեսությունն արամադրություն տակ չկա:

Միայն խոտով ու հարգով առանց ուժեղ կերերի կովի կիթը առատացնել չի կարելի: Սեփական դարի կամ վար սակ չկա, ուրեմն մի կերպ նրանց պետք է ձարել: Սեփական տնտեսություն մեջ նրանք չկան, գնելու համար էլ գումար

չկա: Յերես 40-ում գետեղված աղյուսակից մենք տեսնում ենք, վոր կերի միավորը խոտում ավելի թանկ է նստում, քան թեփի և քուսպի մեջ: Իսկ խոտն առատ է:

Յեթե 8 կիլո խոտի տեղ, վորը թանկ է, մենք 4 կիլո տանք (քանի վոր հարգն առատ է) դա մեզ կտա որական 4 կիլո, իսկ ամբողջ ձմեռվա համար (180 ուրում) կտնտեսի 720 կիլո՝ $7\frac{1}{2}$ ցենտներ խոտ 90 ուրբով: Այս գումարով մենք կարող ենք գնել 3 ցենտներ քուսպ և 6 ցենտներ թեփ: 3 ցենտ-ներ քուսպը 12 ուրբով կանի 36 ուրբ. 6 ցենտներ թեփը 9 ուրբով կանի 54 ու., ընդամենն 90 ուրբի:

Ուրեմն լավ հաշվելով կերերի գները և նրանց սննդա-բարության արժեքը, ավելորդը ծախելով, պակասը գնե-լով կարելի չե կանոնավորել կերակրման գործը: Հետևան-քը՝ սպիտակուցով աղքատ խոտը ծախելով և նրանով ա-վելի հարուստ քուսպ և թեփ գնելով կարելի չե կաթի քա-նակը նկատելի չափով ավելացնել:

III. Կովի կենդանի քաշը 3 ցենտներ է: Կեր է ստանում՝ 6 կիլո լավ դաշտի խոտ և 6 կիլո գարու դարման: Տալիս է $5\frac{1}{2}$ կիլո կաթ: Արդյո՞ք բավական սնունդ է ստանում նա: Յեթե պակաս է, ինչպե՞ս լրացնել:

№3 աղյուսակից յերևում է, վոր 300 կիլո կենդանի քաշ ունեցող կովին հարկավոր է 3,2 կերի միավոր կենսապահ-կեր: Քանի վոր նոր ծնած կովի կաթը այնքան էլ թանձր չէ, մենք կարող ենք հաշվել վոր $5\frac{1}{2}$ կիլո կիթի համար բա-վական է 2 կերի միավոր: Ուրեմն ընդամենը մենք պետք է տանք 5,2 կերի միավոր:

Իրապես մենք տալիս ենք՝

	Սպիտակուց	Վոչսպիտակուց	Կերի միավոր
6 կիլո խոտում նա ստանում է	0,20 կիլ.	2,26 կիլ.	2,1
6 կիլո դարմանում նա ստանում է	0,04 »	2,46 »	1,9
	0,24	4,72	4

Ուրեմն 5,2 կերի միավորների տեղ կովը ստանում է միայն 4 միավոր, վոր բավարար չէ: Վո՞րքան սննդաբար-նյութեր է պահանջում այս կովը:

300 կիլո կենդանի քաշի համար 172 գրամ սպիտակուց
 $5\frac{1}{2}$ կիլո կաթ արտադրելու համար 250 »
 Ընդամենը 422 գրամ

ԿԵՐԱԿՐԱՆ ԿԱՐԳԸ

Ուրեմն մեր կերի մեջ մոտ 400 գրամ, կամ 0,4 կիլոսպիտակուց է պակասում: Պարզ է, վոր կերը պետք է հարստացնել սպիտակուցով, վորը մեծ քանակությամբ գտնվում է թեփի, ևս առավել քուսպի մեջ: Աղյուսակ №1 ցույց է տալիս, վոր այդչափ սպիտակուց կարող է տալ մոտավորապես 1 1/4 կիլո բամբակի և արևածաղկի քուսպերի խառնուրդ կամ 2 կիլոից քիչ պակաս թեփ: Կարելի չէ այդ պակասը լրացնել և վոսպի, սիսեռի, վիկի, սոյայի ալյուրով:

IV. Կովը 400 կիլո կենդանի քաշ ունի: Կիթի սկզբին տալիս է 12 1/2 կիլո կաթ: Ի՞նչպես կազմել կերաբաժինը:

Համաձայն №3 աղյուսակի այսպես քաշ ունեցող կենդանուն պետք է տալ մոտ 4 կերի միավոր կենսապահ կեր, իսկ 12 1/2 կիլո կաթ արտադրելու համար (հաշվելով մի կերի միավորից 2 1/2 կիլո կաթ) — 5 կերի միավոր, ընդամենը 9 կերի միավոր:

Աղյուսակ այս կերաբաժինը բավարար է կազմած:

Այստեղ կերի չափը վորոշված է ըստ Ֆիզիոլոգիական նորմայի հաշվելով 1 կերի միավորից 2 1/2 կլ. կաթ: Ինչպես վերևում բացատրված էր՝ Ֆիզիոլոգիական նորման այն մի-նիմալ չափն է, վորից պակաս տալուց կովը սկսում է նի-հարել, ապա և կիթը պակասեցնել. այս սահմանից վերն է, վոր կովը ավելացրած կերի ուժով սկսում է առատ կիթ տալ. և այս հավելումները շարունակվում են մինչև այն, յերբ կե-րի վերջին հավելումի գինը հավասարվում է ավելացած կի-թի գնին:

Ուրեմն, այս կերաբաժինը կազմված լինելով ըստ Ֆի-զիոլոգիական նորմայի, պակաս է, պետք է նրան ուժաղաց-նել, հարստացնել: Բայց մինչև վո՞ր առտիձան, ի՞նչպես վորոշել հավելումների վերջին սահմանը:

Այդ հարցին վորոշ պատասխան տալ չի կարելի, վորով-հետև նորմայից վերը կիթ ավելացնելու ընդունակութունն առհասարակ է և զանազան կովեր մինչև զանազան աստիճանի յեն բարձրացնում իրանց կիթը, վոր իմացվում է ուղղակի փորձով:

Համենայն դեպս Ֆիզիոլոգիական նորմայով կերակրելը նյանակում է կաթնատվության տեսակետից սխալ կերակրել, չհապեցնել կաթնատվության պահանջը:


Մենք տեսանք, վոր կերերը իրանց բաղադրությամբ և կաթ արտադրելու ընդունակությամբ տարբեր են: Բացի այդ մենք գիտենք վոր կերը լավ մարսվելու, կազմվածքում յու-րացվելու, առաջ արյուն դառնալու և հետո կաթի վերածվե-լու համար, հարկավոր է վոր սպիտակուցային և վոչսպի-տակուցային մասերը կերի մեջ լինեն կանոնավոր չափով խառնված: Յեթև մենք այժմ առանձին ուստացնենք դարման, վորը շատ քիչ սպիտակուց է պարունակում, բայց մյուս, վոչսպիտակուցային մասերը առատ են, այս յերկրորդ մասը կլինի չափազանց շատ, ավելորդ և չի յուրացվի և կանցնի աղիքներով աղբանոց (տես յերես 16-17): Յեթև հետո տանք մի ուրիշ կեր, որինակ քուսպ, վորը առատ սպիտակուց է պարունակում, կկրկնվի միևնույն բանը, բայց այս անգամ ապարդյուն, աղիքներով կանցնի ավելորդ սպիտակուցը:

Պարզ է, վոր այնպես կերակրելու կարգ պետք է մտցնել, վոր յերկու տեսակի կերերը մոտավորապես նպատակահար-մար խառնված լինեն և մեկը մյուսի մարսելուն նպաստեն: Այդ ձևով բոլոր կերերը լավ ոգտագործված կլինեն և վոչինչ չի կորչի:

Կերը վորով և աղիքներով այս ձևով է անցնում: Կովի, նույնպես և վոչխարի, այժի և առհասարակ այսպես անվան-ված վորոճող կենդանիների ստամոքսը ուրիշ կենդանիների (որինակ մսակերների) ստամոքսից նրանով է զանազանվում, վոր մի մասից չի բաղկացած, այլ 4 բաժանմունք ունի: Կերը բերանից անցնում է դեպի առաջի, ամենամեծ մասը՝ այն է՝ թափանը (նկար 3), վորտեղ մնում է, կակղում է և հետո է անցնում մնացած 3 բաժանմունքները (ցանցիկը, հաղա-բաթերթիկը կամ կծիկը, չրգանը), վորից հետո անցնում է բարակ աղիքները:

Ինչպես նկար № 3-ից յերևում է, կերը բերանի կողմից դալով կարող է անցնել կամ մեծ բաժանմունքը, թափանը կամ մյուս բաժանմունքները. դա կախված է նրանից, թե ինչ տեսակի կեր է ընդունում կովը՝ հեղուկ, կակուղ, թե՞ կոշտ, կուլիտ: Յեթև կերը հեղուկ է, նա կարող է հեշտու-թյամբ անցնել փորի մյուս բաժանմունքները. յեթև կերը կուլիտ է, նա գրգռում է նրանց մուտքը, վորը փակվում է

և կոպիտ կերը ընկնում է թափանք: Այստեղ կերը կակղում է, հարվում, վերադառնում բերանը, վորտեղ կովը լավ ծամում, մանրացնում է, այսինքն «վորոճում» է և նորից կուլ տալիս: Այժմ այս կակղացրած, լավ ծամած, մանրացրած կերը այլևս չի դրդոտում հազարաթերթիկի ցանցի մուռըր, վեր-



ջինս չի փակվում և կերը ազատ մտնում է հետևյալ բաժանմունքները և անցնում աղիքները:

Այդ պատճառով մենք ավելի նպատակահարմար ենք համարում այն կարգը, յերբ տավարին առաջ տալիս են կոպիտ կերը, վորը շուտ չի մարսվում, այլ նախորոք թափանում կակղում, նորից ծամվում և միայն այդ ժամանակն է սկսում նրա մարսվելը անցնելով մյուս բաժանմունքներով աղիքները: Յեթե այժմ ուժեղ կերը խառնվի կակղած կոպիտ կերի հետ, կստացվի այնպես կանոնավոր խառնուրդ, վորը ավելի լավ կմարսվի և յուրացվի:

Յեթե ուժեղ կերը, որինակ թեփը, տանք ջրախառն կամ յեփած, այն ժամանակ նա թափանով չի անցնի, այլ ուղղակի կանցնի մյուս բաժանմունքները չխառնվելով կոպիտ կերի հետ: Այդ պատճառով յես խորհուրդ եմ տալիս առաջ ուժեղ կերը տալ չոր, կամ թե ջուր սրսկելով, այնպես, վոր չփոշիանա, իսկ ամենից լավն է նրանց խառնել դարմանի հետ, վորի վրա նախորոք ջուր է չաղ տված:

Դարմանը լավ է տալ աղի ջուր սրսկած: Արմատապտուղները շատ ջուր են պարունակում իրանց մեջ, այդ պատճառով նրանց լավ է տալ դարմանից հետո, վորի կակղացնելուն նրանք շատ կնպաստեն:

Վորոճալը շատ կարեւոր բան է այդ պատճառով անառններին պետք է ժամանակ տալ վոչ միայն ուտելու, այլև վորոճալու համար, անդադար կովերին անհանգստացնելը, աղմուկ և շարժումը վատ են ազդում կաթնատվության վրա: Սովորական պայմաններում բավական է որական 2 անգամ լավ կերակրելը. մնացած ժամանակը պետք է ազատ մնա վորոճալու համար և կենդանիները անհանգստացվեն միայն կթելու և ջուր տալու ժամանակը: Յեթե տնտեսությունը արմատապտուղ ունի և այն առատ տալիս են կովերին, այդ դեպքում կարելի չէ ընդունել կերակրելու և յերրորդ հերթը հատուկ արմատապտուղների համար (անվնաս կարելի չէ տալ մինչև 30-50 կիլո):

Խմբակային կերակրումը: Բոլոր հաշիվները, վոր մենք մինչև այժմ անում եյինք, այնպես եյին կատարվում, վոր կարծես թե ամեն մի կովի համար առանձին հաշիվ պետք է անել: Գործնական կյանքի մեջ այդպես վարվել կարելի չէ միայն մերձադարային տնտեսություններում, վորտեղ ամեն մի կաթիլ կաթը գին ունի: Միևնույնը կարելի չէ ասել առանձին դյուղացիների մասին, վոր 1-3 կով ունեն: Բայց կոլխոզում կամ սովխոզում, վորտեղ վոչ թե տասնյակներ, այլ հաճախ և հարյուրավոր կովեր կան, կարելի չէ արդյոք ամեն մի կովի համար առանձին հաշիվ պահել:

Այս դեպքում կովերին բաժանում են մի քանի խմբերի, վորտեղ միացրած են մոտավորապես հավասար (բայց նրանց կիթի կենդանի քաշի) կովեր, վորոնց կերաբաժինը միատեսակ է: Բայց բոլորովին հավասար խմբակներ կազմել: Գործը հեշտ չի, կամ պետք է մեծ թվով խմբակներ կազմել: Գործը հեշտացվում է նրանով, վոր կազմում են խմբակներ, վորոնց կիթը զանազանվեր կամ մեկ կերի միավորով կամ, ասենք, 2 կիլո կաթով: Իսկ յեթե խմբակների մեջ կան քիչ տարբերվող կիթով կովեր, կեր բաժանողը նորմայից մոտավորապես մի քիչ ավել կամ պակաս ուժեղ կեր է տալիս: Յենթագրենք թե մեր հսկողության տակ գտնվում է 200 կով, վորոնց կիթը տարբերվում է 1-ից մինչև 12 կիլո: Առաջին, ամենապակաս կիթ տվողների խմբակը թող լինի 2 կիլո կաթ տվողները:

Դա չի նշանակում, թե բոլորն եւ ալլ կիթր կտան, այստեղ կարող եւ լինել կով, վոր այս չափից մի քիչ պակաս (ասենք $1/4 - 1/2$ կիլո) կաթ տվող լինի, բայց յուր մեծ կենդանի քաշով կապահանջի կերի հավելում, կարող են լինել և ընդհակառակը՝ փոքր կովեր, բայց մի քիչ ավել կիթ տվողներ:

Յերկրորդ, յերրորդ և հետևյալ խմբակները մեկը մյուսից կգանազանվեն 1 կիլո կիթով, կամ 1 կերի միավորով: Վերջինս ավելի հարմար ե: Այն անտեսության մեջ, վորանց գործը նոր ե կազմակերպվում և դեռ հարմարություններ և պատրաստված ու գործին հմուտ մարդիկ չկան, կարելի չե տարբերությունը և 2 միավոր վեր առնել, սկզբում գործը չբարդացնելու համար: Բայց պետք ե ասել, վոր շատ կամ պակաս խմբակներ ունենալը առանձին նկատելի տարբերություն չի անում, վորովհետեւ յեթե գործը լավ ե կազմակերպված և աշխատողները իրանց պարտականությունները կատարում են բարեխղճությամբ, շատ քիչ բարդություն և մտնում գործի մեջ, իսկ հետևանքը նկատելի:

Այժմ մի ուրիշ կարևոր հարց:

Վորքան վոր կովի կիթը շատ լինի, այնքան սպիտակուցի պահանջը ավել ե և հետևապես ավելի կաթնատառ խմբակների կերը պետք ե ավելի հարուստ լինի սպիտակուցով. չե՞ վոր 25 կլ կաթ տվող կովը որական 1 կլ. սպիտակուց ե արտադրում, իսկ 5 կիլո կիթ ունեցողը միայն 200 գրամմ. ուրեմն, 1 խմբակի կերը 5-6 անգամ ավելի սպիտակուց պետք ե պարունակի յուր մեջ, քան յերկրորդը: Յամաքած կովի կերի $1/9 - 1/10$ -ը կարող ե լինել սպիտակուցային, իսկ կաթնատառները — $1/3$ -ը, նույն իսկ $1/4$ -ը: Աղյուսակներով հաշվել ամեն անգամ բարդ բան ե և շատերի համար անմատչելի: Ի՞նչպես հեշտացնել այս գործը:

Յես առաջարկում եմ հետևյալ ձևը:

Յենթադրենք, թե կենդանին յուր հիմնական, կենսապահ կերը ստանում ե կոպիտ և հյութալից կերերով (խոտ, դարման, արմատապտուղ, սիլոս), իսկ արդյունավետ մասը խտացած ուժեղ կերերով — քուսպ, թեփ, ալյուր և նման կերեր: Բոլոր խմբակների համար յես նշանակում եմ հիմնական կենսապահ սննդին ծառայող կերերի չափն ու քանակը այսպես՝ ասենք մի կովի համար, վորի կենդանի քաշը 250 կիլո չե, հարկավոր ե մոտ 2,5 կերի միավոր կենսապահ կեր, վորի համար մենք կարող ենք տալ՝

Կերի միավոր սպիտակուցային վոչ սպիտակուցային

		նյութ	նյութ
3 կիլո մարդագետնի միջակ խոտ	1,00	0,10	1,10
4 > վարսակի դարման	—1	0,04	1,54
1/2 > կանեփի քուսպ	—0,6	0,15	0,21
	2,6	0,29	2,85

Այս հիմնական կերի մեջ, վորը կարելի չե տալ միայն ցամաք, չկիթվող կովերին, սպիտակուցային և վոչսպիտակուցային մասերի հարաբերությունը հավասար ե 1:10, այսինքն վոչսպիտակուցային մասերը 10 անգամ ավել են, քան սպիտակուցային, վոր կաթ չտվող, ցամաք կովի համար նորմալ կարելի չե համարել յեթե, չհամարել մի փոքր հավելում հորդի բաժին:

Այս հիմնական (կենսապահ) կերին մենք պետք ե արդյունավետ կաթնարեր կեր (սպիտակուցով հարուստ) ավելացնենք, վոր կաթ ստացվի: Սրա համար մենք կազմում ենք մի խառնուրդ 1 մաս բամբակի քուսպից և 2 մաս թեփից, վոր շատ հարուստ կլինի սպիտակուցով. այս հաշվով՝

1 կիլո բամբակի քուսպը կղենեւա	0,38	0,36	1,25
2 > թեփ	0,22	1,02	1,67
3 կիլո խառնուրդ	0,60	1,38	2,92
1 > >	0,20	0,46	0,97

Ուրեմն մենք ունենք յերկու տեսակ խառն կերեր, վորոնցից առաջինը կլինի հիմնական կերը, վորից կովը կստանա միայն կենսապահ սնունդ: Յերկրորդը մեզ կծառայի իբրեւ կաթնաբաժին. այս հավելումը կլինի կիթի բարձրության համապատասխան. այժմ հետևենք թե ինչպես կփոխվի կերի բաղադրությունը ըստ կիթի:

1. Հիմնական կերին մենք կավելացնենք 1 կիլո այս կաթնարածից, կստանանք՝ $2 1/2$ կիլո կաթ և՝

	Կերի միավոր սպիտ.	վոչ սպիտ.	սպիտ. և վոչ սպ.	հարաբ.
Հիմնական կերում	2-6	0,29	285	1,10
Հավելում 1 կիլո	1	0,20	046	
2 1/2 կիլո կիթ	3,6	0,49	3,31	1:6:28

Վերջի թիվը ցույց ե տալիս, վոր այժմ սպիտակուցային և վոչսպիտակուցային մասերի հարաբերությունը դարձել ե ավելի նեղ:

2 Գլխի բաժնից համար ավելացնենք ելի մի միավոր կապիտալ 2.5 կիլո			
կիլո ընդամենը հասացվի կերի միավոր սպիտակ. վոչ սպիտակ հարաբերութ.	2.6	0.29	2.85
Հիմնականում	2.0	0.40	0.92
2 կիլո հավելում			

5 կիլո կաթ և	4.6	0.69	3.77	1.5.5
3 Շաբաթանակներ կերը ավելացնենք ելի 1 միավորով հասացվի հարաբերութ.				
կերի միավոր		սպիտակուց.	վոչ սպիտակուց.	
Նախընթաց (ՁԵ 2)	4.6	0.69	3.77	
1 կիլո հավելում	1	0.20	0.46	

1 1/2 կիլո կիթ	5.6	0.89	4.23	1.4.8
4 Հեռակալ 1 կերի միավորի հավելումը կապ				
կերի միավորներ սպիտակուց վոչ սպիտակուց				
Նախընթացում	5.6	0.89	4.23	
1 կիլո հավելում	1.0	0.20	0.46	

10 կիլո կիթ	66	1.09	4.69	1.4.3
5 Ելի ավելացնելով նոր կերի միավոր կունենանք				
կերի միավոր սպիտակուց վոչ սպիտակուց				
Նախընթացում	6.6	1.09	4.69	
1 կիլո հավելում	1.0	0.20	0.46	

12 1/2 կիլո կիթ	76	1.29	5.15	1.4
-----------------	----	------	------	-----

Այս որինակներից պարզ յերևում է՝ ինչպես ըստ կիթի ավելացման աստիճանաբար ավելանում է կերի միավորների և սպիտակուցային մասերի քանակը։ Սպիտակուցային և վոչսպիտակուցային մասերի հարաբերությունն ել աստիճանաբար նեղանում է, այսինքն կաթ գոյացնելու համար անհրաժեշտ սպիտակուցը ավելի ու ավելի տեղ է բռնում սոված կերի մեջ։

Գ Լ Ո Ւ Խ X I

ԿԵՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԸ

Կան կերեր, վոր կարելի չե մեծ չափով տալ անասուններին առանց վնասելու նրանց կիթին և առողջությանը, կան այնպիսիները, վոր կարելի չե միայն սահմանափակ քանակությամբ տալ, այն ել ուրիշ կերերի հետ խառնած։ Կա՞ն արդյոք չափեր, սահմաններ յուրաքանչյուր կերի քանակի վերաբերյալ և ինչպե՞ս վորոշել այդ սահմանները։

Այս հարցին զանազան հեղինակներ զանազան կերպով են պատասխանում, սահմանելով զանազան չափեր ու նորմաներ, յերեքմն մեկը մյուսին հակասող։ Կան կերեր, վոր կարելի չե տալ մեծ չափով առանց վնասի կենդանիների համար և կաթին կամ կաթնամթերքների վորակը փչացնելու։

Կան կերեր, վոր անվնաս կարելի չե տալ միայն քիչ չափով, այն ել ուրիշ կերերի հետ խառն։ Հարց ե հարուցվում՝ կա՞ն արդյոք չափեր, նորմաներ զանազան կերերի համար և վորո՞նք են այդ նորմաները։

Այս հարցին զանազան հեղինակներ տարբեր պատասխաններ են տալիս. մի քանիսը տալիս են, որինակ, քուսպի վերաբերյալ բավական քիչ նորմաներ, առավելապես յեթե կաթը պանրագործության համար ե հատկացվում, կամ մանուկների սննդի համար։ Մյուսներն ավելի անատ չափեր են թույլատրում. կան և այնպիսիները, վորոնք առհասարակ կերը չեն սահմանափակում, պնդելով, թե անվնաս կարելի չե մեծ չափով— 6—8 կիլոգրամ միատեսակ կեր տալ։

Աշխատենք պարզել այս հարցը։

Յես անձամբ համաձայն չեմ վոչ նրանց հետ, վորոնք, որինակ, քուսպի քանակը սահմանափակում են հայտնի կիլոգրամներով, վոչ ել նրանց հետ, վորոնք թույլ են տալիս մեծ քանակով գործ ածելը։ Վնասակար ազդեցություն անկասկած նկատվում է, յերբ մեծ քանակությամբ քուսպ ե գործ ածվում, առավել յերբ մանուկների կերակրման համար ե գործ ածվում կաթը, կամ պանրագործության համար, թեև պակաս չափով բայց և յուղի վորակի վրա կարող ե ազդել։ Ուրիշ կերեր ել կարող են վնասել կաթնամթերքների վորակի վրա, յերբ նրանք մեծ քանակությամբ են գործածվում։

Բայց ի՞նչպես պետք ե հասկանալ «մեծ քանակություն»։ Կարելի՞ չե դրան կիլոգրամներով վորոշել։ Վոչ։ Որինակ, մի դեպքում կովն ստանում է ընդամենը 4 կիլո ուժեղ կեր և նրանից յերկուսը քուսպ, մյուս դեպքում 9 կիլոգրամ ուժեղ կեր ե մատակարարվում և դրանից 3 կիլոն կազմում է քուսպ։ Վո՞ր դեպքում քուսպի քանակն ավելի չե և յեթե քուսպը կարող ե վնասակար ազդեցություն ունենալ, վո՞ր դեպքում այդ ազդեցությունն ավելի ուժեղ կլինի։

Յեթե քաշով վորոշելու լինենք, իհարկե յերկրորդ դեպքում ավելի կլինի, բայց յեթե համեմատական չափով վորոշենք, դուրս կդա, վոր առաջի դեպքում քուսպը կազմում է ամբողջ ուժեղ կերի կեսը, իսկ յերկրորդ դեպքում 9-ից միայն 3-ը, ուրեմն 1/3 մասը։

Յեթե կաթի մասին դատելու լինենք նրա արտաքին նշաններից, կարելի չե ասել, թե այս կամ այն կերն առան-

ձին վատ կամ լավ ազդեցութիւնն չեն ցույց տալիս: Իսկ յետեւ հետեւենք թե ինչ ազդեցութիւնն է ունենում կերբ մանկան կազմվածքի վրա կամ կաթից ստացած պանրի կամ կարագի վրա, այն ժամանակ հեշտութեամբ կվորոշվի լավ կամ վատ ազդեցութիւնն այս կամ այն կերի, կամ միեւնոյն կերի այս կամ այն քանակը:

Այսպէս, թե այնպէս, բայց ելի պետք է մի կերպ վորոշել կերերի մթերման նորման: Յետ իմ բազմամյա փորձից յեկել եմ այն յեզրակացութեան, վոր քուսպը պետք է բոլոր ուժեղ կերերի (միասին առած) մի յերրորդից ավել չլինի: Յետեւ այս նորմայից ավել լինի, կարագը կստացվի չափազանց կակուղ, քսովոյ, ճարպանման, չուտ փշացող. պանիրը փքում է, միահավասար ծաղիտիքի տեղ տալիս է մեծ խորշեր, կծու համ ու հոտ է ստանում. մանուկների սննդի համար անպետք:

Առավել զգուշ պետք է լինել փորրիկ, տնայնագործական մամուլներով ստացած քուսպ գործածելիս: Սովորաբար նրան համարում են ավելի լավ, գնահատելի, քան մի-խանիկական ձիթահաններից ստացածը, պատճառաբանելով նրանով, վոր նրանք «ավելի յուղալի յեն»: Հենց այս հանգամանքը, վոչ թե առավելութիւնն է, այլ պակասութիւնն: Առաջինը՝ վորքան շատ յուղ մնա քուսպի մեջ, այնքան սպիտակուցը պակաս կլինի, իսկ այս վերջինը սննդի տեսակետից ավելի գնահատելի չէ: Յերրորդը՝ գլուղական ձիթահաններից քուսպում մնում է շատ ձեթ, վորը թեև սերմից դուրս է յեկել, բայց մնացել է քուսպի մեջ ազատ դրութեամբ մեծ կաթիլներով. վորոնք պիտարութեամբ են մարսվում և յուծողական ազդեցութիւնն են ունենում. վերջապէս նա թեթեւեղմած լինելով ավելի ուր է պարունակում յուր մեջ և նրա ազդեցութեան տակ ձեթն սկսում է փշանալ, կծվել և վնասակար հատկութիւնն ստանալ:

Գարու, վարսակի, սիմինդրի ալյուրը և թեփը կարելի չէ մեծ քանակութեամբ մատակարարել: Բայց սրանք ել գերադասելի չէ տալ վոչ առանձին-առանձին, այլ նրանց խառնուրդը:

Գարու ծիւրը (գարեջրի գործարանի մնացորդ) շատ լավ կեր են ներկայացնում, կարագին անուշ համ ու հոտ տվող. բայց քանի վոր՝ նրանք անասունների վրա հուզող ազդեցութիւնն ունեն, նրանց կարելի չէ տալ վոչ ավել քան $\frac{3}{4}$ —

